

ՀԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ


ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ԴԱՄԱՐԱՐԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԳՈՒՈՎԻՆՈ ԳՅՈՒՂՈՒՄ

1950 թ. հունիսին Իջևանի շրջանի Գոլովինո գյուղում Տիգրան Քաջախյանն իր բնակարանի հիմքերը փորելու ժամանակ բաց է անում մի դամբարան: Այս դամբարանից 25 մ հեռավորությամբ վրա, Երևանից Դիլիջան տանող ասֆալտապատ ճանապարհի աջ եզրին, դարձյալ պատահաբար, բացվում են երկու քարակրկյա դամբարաններ, որոնցից յուրաքանչյուրի մեջ կային մարդկային մի դանդ ջարդված վիճակում և մարդկային ոսկորներ: Հողի մեջ գտնվել են սպիտակ և կապույտ գույնի մանր ուլունքներ, ինչպես նաև ապակե սրվակների բեկորներ: Գտնված այս իրերը պատկանում են 2-րդ կամ 1-ին դարին (մ. թ. ա.):

Տեղում մեր կատարած հետազոտություններից պարզվեց, որ այդ դամբարանները պատկանում են մի ընդարձակ դամբարանադաշտի, որ տեղավորված է Գոլովինո գյուղի ներքին ծալրին գտնվող անտառապատ բարձունքներից մեկի ծառազուրկ ստորոտում: Այստեղ դամբարանների ընդհանուր թիվը հասնում է մոտ 120-ի (նկ. 1): Դամբարանները դասավորված են հյուսիսից՝ հարավ, կամ հարավ-արևելքից՝ հյուսիս-արևմուտք, գրեթե միշտ կանոնավոր շարքերով: Շարքերի հեռավորությունը միմյանցից տատանվում է 4—10 մետրի միջև, իսկ միեւնույն շարքում գտնվող դամբարանների միջև եղած հեռավորությունները՝ 2-ից մինչև 15 մ է: Կան այնպիսի դամբարանաշարքեր, որոնք ունեն 100 մ երկարություն, բայց այդ տարածության վրա պահպանվել են միայն 10 դեղմանների արտաքին նշաններ: Շատ տեղերում որոշ դամբարանների ծածկի քարերը երևում են ամբողջությամբ, կամ մասամբ, երբեմն էլ նկատվում են շարքերի քարերից մեկի կամ մի քանիսի միայն վերին ծալրերը, սրանց ծածկի քարերը չեն պահպանվել: Մնացած բոլոր դամբարանները ժամանակի ընթացքում կորցրել են իրենց արտաքին նշանները:

Գոլովինո գյուղի ներքևի ծայրում գտնվող դամբարանադաշտը կիսվում է նրա կենտրոնից անցնող «Հավուց ջուր» կոչվող առվակով, որ սկիզբ է առնում խրտանոց¹ ձորի վերևի անտառ-ներում:



Նկ. 1. Գոլովինո գյուղի դամբարանադաշտի սխեմատիկ հատակագիծը.
ա) հաստ ցուցադրելով դամբարանները պեղվել են 1950 թվականին.
բ) բարակ ցուցադրելով դամբարանները պեղվել են 1953 թվականին.
գ) մեջքերը բաց քառանկյունի դամբարանները պեղված չեն:

Այս դամբարանադաշտի երկարությունը հասնում է 280, իսկ լայնությունը՝ 120 մ: Նրա արևմտյան վերջավորության վրայով անցնում է Երևանից Դիլիջան տանող ճանապարհը, որը Դիլիջանից բաժանվելով երկու մասի՝ իր հյուսիսային ճյուղով գնում է Իջևան-Աղստաֆա ուղղությամբ, իսկ հարավ-արևմտյան ճյուղով՝ Կիրովականի վրայով՝ դեպի Թբիլիսի:

¹ «խրտանոց» անունն առաջացել է 19-րդ դարի վերջին Դիլիջանի բնակիչ հյուսն Բեգո (հավանաբար Բեգլար) քեռու այստեղ կառուցած խառատանոց-ի (հյուսնոցի) անունից, որի սվեթակները պահպանվել են խրտանոց կոչվող ձորում: խառատանոց բառը տեղական արտասանությամբ հնչվել է խրտանոց և այստեղից էլ «խրտանոցի ձոր» հատուկ անվան առաջացումը: Այս առթիվ 1953 թ. մենք հաղորդում արինք Պատմության ինստիտուտի հնագիտական սեկտորի նիստում:

Մինչև այս դամբարանադաշտի հայտնաբերումը, Գոլովինոն հնագիտական գրականության մեջ հայտնի էր միայն իր տանոցի կուլտուրայով¹:

Ստորև ներկայացնում ենք Գոլովինոյի դամբարանադաշտում մեր կատարած 1950 և 1953 թվականների պեղումների միջոցով բացված առավել աչքի ընկնող դամբարաններից միայն մի քանիսի համառոտ նկարագրությունը²:

Միաժամանակ քննության ենք առնում տվյալ դամբարաններից գտնված իրերի նույնպես մի մասը, գիտակցաբար անտեսելով դամբարանների պեղման տարեթվերի և համարակալման հերթականությունները:

Գոլովինոյի դամբարանալին կուլտուրան վերջնականապես ճշգրտելու ու ժամանակագրելու և արդ կուլտուրայի կապը նրանից քիչ վերև գտնվող բնակատեղիի հետ պարզելու նպատակով, 1953 թ. լրացուցիչ պեղումներ կատարեցինք դամբարանադաշտի հարավ-արևելյան մասում³: Պեղեցինք ընդամենը վեց դամբարան:

¹ 1929 թ. իր տանոցի ձորում առաջին անգամ հնագիտական պեղումներ կատարեց Հուշարձանների Պահպանության կոմիտեի արշավախումբը պրոֆեսորներ՝ Ա. Բալանթարի և Ա. Պաշատրյանի ղեկավարությամբ: Փայլուն արդյունքներով ավարտված այս պեղումների մասին առաջին անգամ տպագրվեց պրոֆեսոր Ա. Պաշատրյանի «Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն» վերնագիրը կրող աշխատության 105—106 էջերում, երկրորդ անգամ, նույնպես համառոտ՝ պրոֆեսոր Ֆաշիկ Սամուելյանի «Հին Հայաստանի կուլտուրան» աշխատության երկրորդ հատորում, 1941 թ. (էջ 22, 147, 236 և 20 ու 76-րդ ծանոթություններում):

Պեղող հեղինակները խրտանոցի նյութերը ժամանակագրեցին երկաթի ինդուստրիային, այսինքն՝ 7—6-րդ դարերին մ. թ. ա. և այդ ժամանակագրումը ընդհանուր ճանաչում դտավ մասնագիտական գրականության մեջ:

Այդ պեղումների ամբողջ նյութերը վերջին անգամ հանգամանորեն ուսումնասիրեց և նույն տեղում իր պեղած մի քանի դամբարաններից հանված նյութերի հետ հրատարակեց Ն. Ա. Մարտիրոսյանն իր աշխատության մեջ, որն առանձին գրքով լույս տեսավ 1954 թ.:

² 1950 և 1953 թվականների պեղումներին ակտիվ մասնակցություն են ունեցել Դիլիջանի դավառագիտական թանգարանի ղիբեկտոր Նդիշե Հովսեփյանը և թանգարանի աշխատակից Ֆետենցը, որոնց հայտնում ենք մեր շնորհակալությունը:

³ Հարկ է նշել նաև մի սխալ: Մինչև այժմ ոչ միայն ընթերցողները, այլև որոշ հնագետներ շփոթում կամ նույնացնում են Գոլովինոյի և իր տանոցի կուլտուրաները և նույնիսկ իր տանոցի պեղումները վերագրում են Գոլովինոյին: Սակայն Գոլովինոյի կուլտուրան ընդգրկում է զրե-

Պեղված դամբարաններից և ոչ մեկում երկաթ չգտնվեց, բայց գտնված պղնձե իրերը և կավամանները նման էին 1950 թ. ալստեղից պեղումներով ձեռք բերվածներին:

Բոլոր դամբարաններն ունեին արտաքին նշաններ, երևում էին նրանց ծածկի քարերը: Սրանք իրենց կառուցվածքով, իրերի տեսակներով և թաղման ձևերով դասվում են 10—8-րդ դարերին (մ. թ. ա.) պատկանող քարաբլիզների շարքը: Ալստեղ գտնվող առաջին դամբարանն ուղղված էր հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք, որի երկարությունը երկու մետր էր, լայնությունը՝ 1,7 մ, խորությունը՝ ծածկի քարի տակից՝ 1,22 մ: Դամբարանում բացվեց մարդու մեկ կմախք, որը լիովին քաջքայլված էր, ալք պատճառով հնարավոր չեղավ կմախքի գիրքը որոշել: Գերեզմանի կենտրոնում դրված էր երկու լայնաբերան քրեղան, երկու փոքրիկ սալիտրիկ և մեկ պղնձե ապարանջան: Հողերի միջից գտնվեց սարգիտնի մի քանի ուլունք:

Երրորդ դամբարանը քիչ ավելի փոքր էր առաջինից, ուղղված էր հյուսիսից-հարավ, սրա մեջ բացվեցին մարդկանց լավ պահպանված երեք կմախք: Ուշագրավն այն է, որ կմախքները դրված էին դամբարանի լայնքով, գլուխներն արևմտյան պատի կողմը, իսկ ոտքերը՝ արևելյան: Կմախքներից մեկը գտնվում էր հյուսիս-սային պատի մոտ՝ պզգամ վիճակում, իսկ մյուս երկուսը՝ հարավային պատի մոտ, վերջիններս թաղված են եղել կողք-կողքի, մեկն աջ, մյուսը՝ ձախ կողքի վրա ոտքերը և թևերը կույր բերած դրությունով: Կմախքներից մեկը պատկանում էր կնոջ, մյուսը՝ տղամարդու (հավանաբար դամբարանը պատկանել էր մի ընտանիքի): Ալստեղ գտնված ուռուցիկ իրանով անկանթ կճուճներից մեկը դրված էր հյուսիս-արևելյան անկյունից 0,20 մ դեպի դամբարանի խորքը, իսկ մնացած միջին մեծություն երեք կճուճները դրված էին դամբարանի կենտրոնական մասում, ննջեցյալների ոտքերի կողմում: Կնոջ կմախքի գանգի մոտից գտնվեցին բրոնզե երկու ատամնավոր ապարանջան և սարգիտնի հինգ ուլունք:

Թե մի ամբողջ հազարամյակ, իսկ Քրտանոցինը վերաբերում է 7—6-րդ դարերին մ. թ. ա.: Հետևապես այս երկու կուլտուրաները ոչ միայն նման չեն իրար և պատկանում են տարբեր ժամանակների, և, հավանապես է՝ նաև տարբեր էթնիկ խմբերի, և վերջապես սրանք ոչ թե միևնույն, այլ տարբեր վայրերում են գտնվում: Քրտանոցը Գոլովինոյից ավելի քան երեք կիլոմետր հեռավորության վրա է: Իսկ Գոլովինոյի կուլտուրան շոշափում և ընդհանուր ազեբաի մեջ է գտնվում Սևանի ավազանի, լեռնային Ղարաբաղի, Փանծակի և Կիրովականի կուլտուրաների հետ:

Չորրորդ դամբարանն ուղղված էր հյուսիսից-հարավ և համեմատաբար շատ իրեր էր պարունակում: Մրա մեջ նույնպես բացվեցին մարդկային երեք կմախք ճիշտ նույն դիրքով, ինչ դիրքով թաղված էին երրորդ դամբարանում: Հավանաբար այս դամբարանը նույնպես պատկանել է մի ընտանիքի: Դամբարանի հյուսիս-արևմտյան անկյունի մոտ դրված էր ուռուցիկ իրանով միջին մեծությամբ մի կճուճ, իսկ երկու կճուճ էլ դրված էին դամբարանի կենտրոնական մասում: Մնացած իրերն ի հայտ եկան ալդ կճուճների մոտից: Այստեղ հողերի միջից հավաքեցինք սարդիոնի մի քանի ուլունք, բրոնզե երեք փոքր օղ և ականջի երկու օղ, որոնց ծալերը օձագալար տեսք ունեն և անցնում են օղերի տըրամազծի կենտրոնով: Նույնանման օղեր նախկինում գտնվել են Գոլովինոյում, Սեանի ավազանում, Կիրովականում և այլ վայրերում:

Առավել հետաքրքիր էին Գոլովինոյի դամբարանադաշտից շուրջ 700 մ դեպի հարավ-արևելք գտնվող անանուն մի բարձունքի վրա տեղավորված հին¹ բնակատեղի հետախուզական պեղումները:

Այդ բնակատեղին երեք կողմից ունի դժվար ելանելի թեք լանջեր, իսկ բլրի հարթ գագաթի եզերքներում տեղ-տեղ նկատվում են պարսպապատի միաշար հետքեր:

Պարսպի ներսում, բլրի տափարակ գագաթի վրա, երկու տեղով երեւում են շրջանաձև և քառանկյուն շինությունների (կացարանների) փոս ընկած հետքերը, որոնց տրամագիծը տատանվում է 3—5 մետրի միջև: Այս փոսերից մեկը պեղելուց պարզվեց, որ նրա պատերի պահպանված մնացորդները միաշար են: Մեկ մետր խորանալուց հետո բացվեցին անկանոն անկյուններ ունեցող կացարանի միաշար պատեր, որոնցից պահպանվել էին միայն երկու անկյունները: Անկյուններից մեկի մոտ, շենքի հատակին հայտնաբերվեց կավակերտ վառարան, որն ավելի օջախի էր նման, քան թոնրի: Սրա բարձրությունը 30սմ-ից չէր անցնում: Թոնիր-օջախը պատրաստված էր առանց շուրթերի և ակի, տրամագիծը 0,19 մ էր, ներսում պահպանվել էին մոխրի մնացորդ և ածխի կտոր-տանք: Այս կացարանի պատերի մոտից և միջից հավաքեցինք տարբեր կավամանների ավելի քան 70 բեկոր¹, որոնք իրենց գույ-

¹ Ինչպես այս բնակատեղից, այնպես էլ 1953 թ. մեր պեղած դամբարաններից գտնված զրեթե բոլոր իրերը, բացի ականջի օղերից և բրոնզե երկու ապարանջաններից, հանձնել ենք Դիլիջանի գավառագիտական թանգարանին:

ներով, կառուցման տեխնիկայով, վրաներն ունեցած զարդերով և կանթերի տեսակներով, շուրթերի պահպանված ձևերով համապատասխանում են 10—8-րդ դարերի (մ. թ. ա.) կավամաներին: Գտնվողների ալս բնակատեղի սենյակներն իրենց արտաքին ձևերով նման են Քաղսի, Աթարբեկյանի (Ախտալի շրջան), Լճաշենի (Սևանի շրջան), Մուխանի (Նոր Բալաղետի շրջան), Իրինդի (Թալինի շրջան) և առհասարակ Հայաստանի 10—8-րդ դարերի (մ. թ. ա.) պատկանող բնակատեղիներին:


Այսպիսով, հետախուզական պեղումներից և տեղի հետախուզությունից համոզվեցինք, որ Գոլովինոյի մինչև 7-րդ դարին պատկանող դամբարաններն առաջացել են նշված բնակատեղի բնակիչների թաղումներից:

Գոլովինոյի դամբարանադաշտի պեղումներից հայտնաբերված կուլտուրան ցույց է տալիս, որ այն սկիզբ առնելով մեր թվականությունից առաջ, երկրորդ հազարամյակի վերջերին՝ հասնում է մինչև մեր թվականությունից առաջին դարը: Ցույց տված դամբարանադաշտում Հ. Մարտիրոսյանը, նույնպես պեղել է երեք դամբարան, որոնցում գտել է առաջինից երկրորդ դարերին պատկանող իրեր, այդ թվում նաև զարդարանքի պարագաներ: 5—3-րդ դարերին պատկանող կուլտուրան դեռևս անժանոթ է Հայաստանին, ի՞նչ ալստեղ կատարվին նոր պեղումներ, ամենայն հավանականությամբ՝ այնտեղ կգտնվեն նաև այդ դարերին պատկանող նյութեր:


Գոլովինոյի ընդարձակ դամբարանադաշտը չէր կարող առաջանալ միայն նշված փոքր բնակատեղի բնակիչների թաղումների հետևանքով, ավելի հավանականն այն է, որ դամբարանադաշտի շրջապատում կարող են լինել նաև այլ բնակատեղիներ ևս, որոնք կամ լիովին ավերվել և դետնի երեսից անհետացել են, կամ գտնվում են անառնների մեջ և մինչև այժմ նսում են անհայտ:

Անդրադառնալով նշված դամբարանադաշտում 1950 թ. մեր կատարած պեղումներին, որ այս աշխատությունից հիմքն է կազմում, հարկ ենք համարում ընդգծել, որ Քաղսյանի տնամերձում, Եզմանյանի բացած քարաբլիզային դամբարանը, որը մենք համարակալում ենք որպես № 1 դամբարան, ուղղված էր հյուսիս-արևմուտքից հարավ-արևմուտք, ծածկված էր երկու տնակ, ոչ շատ մեծ քարերով, խորութիւնը ծածկի քարի տակից՝ 0,95 մ, երկարությունը՝ 1,5 մ, լայնքը գլխի կողմում՝ 1,1 մ ոտքերի կողմում՝ 0,85 մ: Դամբարանի ներսում եղել է մարդկային երկու կմախք:

Պրոֆեսոր Բունալը տեղում կատարած ոսկորների քննութլամբ պարզեց, որ թաղվածներից մեկը եղել է կին՝ մլուսը տղամարդ։ Հավանաբար դամբարանը պատկանել է մի ընտանիքի։ Այստեղ գտնված ոսկորները և կավամանները կիսով չափ թաղված էին ջրի հետ ներս ծծված հողի բարակ շերտի մեջ։ Ննջեցյալների ոտքերի կողմում դրված էր 12 մեծ ու փոքր կավամաններ, որոնք բոլորն էլ կիսով չափ հողով էին լցված (տե՛ս նկ. 2)։ Այստեղ դամբարանի ներսում, դանդերից ոչ հեռու, պատի ճեղքերից մեկի մեջ խրված էր պղնձե մի գեղեցիկ դաշույն (նկ. 3)։ Նման դաշույններ գտնվել են Սեանի ավազանում Երվանդ Լալայանի¹ և Գեոտրեկում՝ Իվանովսկու պեղումների ժամանակ։ Դաշույն-



Նկ. 2. Լայնաբերան կճուճ պատրաստված ձեռքով (1 դամբարան)։




Նկ. 3. Պղնձե դաշույն (1 դամբարան)։

ների այս տեսակը վերագրվում է 9-րդ դարին մ. թ. ա.։ Դամբարանի հողերի միջից հավաքեցինք 20 երկկողմանի ծակծկված սարդիկոնի ուլունք (նկ. 4—1) և երեք բրոնզե փոքր մատանի (նկ. 5)։

Ստորև ներկայացնում ենք 1950 թ. Դուովինոյում մեր պեղած հինգ դամբարաններից գտնված իրերի, թաղման ձեերի և դամբարանների կառուցվածքի նկարագրութլունը։


¹ Ս. Լալայան, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 157, նկ. 100, 108 և 110։



Նկ. 4. Սարգիւնից, աղաթից և շաղախից պատրաստված
ուլունքներ (1 և 2 դամբարաններից):

Երրորդ դամբարան¹.— Դամբարանն ուղղված է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք՝ ծածկված է երկու երկարավուն քարերով: Պատերից երեքը կազմված են շերտավոր քարերից, իսկ մուտքն ունի մանր քարերից 6 շարք շարվածք: Դամբարանի

¹ Երկրորդը, որպես խմբային թաղումների թվին պատկանող դամբարաններ, նկարագրելու ենք վերջում:




Նկ. 5. Բրոնզե իրեր (1 և 2 դամբարաններից):



Նկ. 6. Երբորդ դամբարանի ընդհանուր տեսքը բացելուց հետո:

երկարութիւնը հասնում է 1,58 մ, խորութիւնը՝ ծածկի քարի տակից՝ 1,52 մ, լայնութիւնը մուտքի կողմում՝ 1,08 մ, կենտրոնում՝ 1,18 մ, իսկ ոտքերի կողմում 0,82 մ:



Նկ. 7. Նետասլաքներ օբսիդիանից:

Դամբարանում թաղված է եղել երկու մարդ, սրանցից մեկի գանգի բեկորի պատի (ոսկորի) հաստութիւնը հասնում էր 1,95 սմ: Պետք է կարծել, որ դա հետեանք է հիվանդութիւնների, դուցե նաև թաղումից հետո առաջացած դեֆորմացիայի: Այս դամբարանում գտնվեց հողով լցված կավե երեք աման (նկ. 6): Կավամանները հաւարակ են և անզարդ, պատրաստված են դրդի վրա: Գտնվեցին նաև բրոնզե երկու հասարակ ապարանջան, որոնցից մեկը հողի ժանրութիւն տակ ընկել էր փշրված գանգուկրի մեջ, ինչպես նաև օբսիդիանից երկու սրածալր նետասլաքներ (նկ. 7):

Ջորրորդ դամբարան.— Բացելուց հետո պարզվեց, որ ավերված է եղել հնում: Կառուցվածքով նման էր երրորդ դամբարանին:

Հինգերորդ դամբարան.— Ծածկի տեղը քարեր չկային, գետնի մակերեսին երևում էին նրա պատերը կազմող քարերի վերին ծալերը, դամբարանն ուղղված էր հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք: Դամբարանի երկարութիւնը 1,75 մ է, լայնութիւնը՝ 1,23 մ, խորութիւնը գետնի մակերեսից, կամ շարքի

քարերի վերին ծայրերից հաշված՝ 0,80 մ, դամբարանում թաղված է հղի մեկ մարդ: Հավանաբար ննջեցյալը դրված է հղի դամբարանի կենտրոնում աջ կողքի վրա պառկեցրած դիրքով, ալքերեում էր կուչ բերած ոտքերի դիրքից: Մարդու գանգից պահպանվել էր միմիայն նրա ծնոտի մի մասը: Այստեղ գտնվեցին նաև խոշոր եղջերավոր կենդանու գանգոսկրի մնացորդներ:

Դամբարանում եղած ութը կավամամաններից երեքը լայնաբերան խորը ափսեներ են, երեքը՝ մեծ և ուռուցիկ փորով կնուճներ, իսկ մնացած երկուսը՝ նեղ բերաններով կարճավիզ փոքրիկ կնուճներ, որոնք նման են դավերի: Կավամամաններից մի քանիսի վրա կան հասարակ գծադարձեր:

Ներկորդ դամբարան.— Իր ծավալով Գոլովինոյում պեղած բոլոր դամբարաններից ամենամեծը երկրորդն է: Սա ծածկված էր երկու մեծ՝ ժալաբեկորով, որոնցից մեծն ուներ 1,77 մ երկարություն, 0,59 մ հաստություն և 0,63 մ լայնություն, իսկ մյուսը՝ $1,66 \times 0,68 \times 0,32$ մեծություն:


Դամբարանն ուղղված էր հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք, թեև լցված էր հողով, բայց սկզբնական շրջանում հողից ազատ է եղել:

Դամբարանի երկարությունը 2,16 մ էր, լայնությունը՝ 1,32 մ խորությունը ծածկի քարի տակից՝ 1,24 մ, մեկ կողմից ուներ երեք, մյուս կողմից՝ չորս շարք անմշակ քարերով պատեր, քարերը բերված են դամբարանադաշտից 500—600 մ հեռու գտնվող քարհանքից: Դամբարանի հյուսիս-արևելյան ճակատի պատը, այսինքն մուտքը, շարված էր հինգ շարք մանր քարերով (նկ. 8 կտրվածք Ա—Բ):

Դամբարանի մեջ գտնվող բոլոր կավամամանները դասավորված էին հարավ-արևմտյան պատին մոտիկ իրար վրա երկու շարքով (նկ. 9):

Դամբարանում բացված 18 մարդկային կմախքներից երեքը գտնվում էին ճակատի պատի մոտ պղծած վիճակում, իսկ մնացածները տեղավորված էին դամբարանի կենտրոնում: Պաղած երեք կմախքների դեմքերն ուղղված էին դեպի հյուսիս-արևելք: Նկատելի էր, որ դամբարանի կենտրոնում թաղվածներից մեկը վերևից գցված էր գլխի վրա, որովհետև գանգը գտնվում էր կմախքի ոսկորների տակ: Ներկորդ գանգն առաջինից 10 սմ ավելի բարձր էր ընկած և նույնպես գցված էր գլխի վրա: Նրբորդ գանգն ավելի բարձր էր առաջին և երկրորդ գանգերից, ընկած էր աջ կողքի


վրա, չորրորդ գանգը նույնպես գտնվում էր իր ոսկորների տակ, ծոծրակով դեպի վեր, դեմքով դեպի դամբարանի հատակը, իսկ հինգերորդ գանգն ավելի բարձր էր բոլորից և ընկած էր աջ կողմին մյուս ոսկորների վրա:



Նկ. Ժ. Երկրորդ և չորրորդ դամբարանների հատակադիժը և կտրվածքը:

Այստեղ գանգերն ու ոսկորները թափված էին անկանոն: Այսպես, օրինակ՝ դամբարանի կենտրոնում գտնվող մնացած 10 գանգերից երեքն ընկած էին դեմքերով դեպի դամբարանի հատակը՝ իրենց կմախքների տակ, երկուսը՝ դեմքերով դեպի վեր երկուսը՝ գագաթի վրա, երեք գանգերի դիրքը հնարավոր չեղալ որոշել գանգոսկորների վատ պահպանվածության հետևանքով, բայց նկատելի էր, որ սրանց ոսկորները նույնպես անկանոն վիճակում թափված էին այս ու այն կողմ: Դամբարանում գտնվող ոսկորների դասավորության մեջ որևէ սխառն գտնելու ուղղությամբ մեր բոլոր ջանքերը իզուր անցան: Դամբարանի կենտրոնում ոսկորների և գանգերի հետ խառնված գտնվեցին հինգ հատ ոչ մեծ գետաքարեր, որոնցով, հավանաբար հարվածել են թաղված-


ներին: Ամենամեծ քարն ուներ երկարավուն ձև և $0,52 \times 0,28 \times 0,16$ մ չափ: Վերջինիս ծանրութիւն տակ փշրվել էին հրկու դանդ և բազմաթիւ ալլ ոսկորներ (նկ. 9):




Նկ. 9. Երբորդ դամբարանի ընդհանուր տեսքը պեղելուց հետո:

Դամբարանի մուտքի մոտ թաղված երեք և կենտրոնում գտնվող 15 մարդկալին կմախքների միջև թողնված էր $0,70-0,75$ մ ազատ տարածութիւն:

Դամբարանի ճակատի պատի մոտ թաղված երեք կմախքների մոտից պղնձե սակավաթիւ իրերի հետ գտնվեցին նաև երկաթե իրեր, ինչպես օրինակ՝ երկաթե կեռ դաշույնների քայքայված 3 դաստակ՝ Կարմիր Բլուրի, Աստղաձորի և Խրտանոցի դաստակներին նմանվող (նկ. 10—2—4), մանգաղի երկաթե շեղք, լավ



պահպանված վիճակում (նկ. 10—1) և պղնձե մի քանի առարկաներ, օրինակ կենտրոնից ծակ մեկ հատ կոնաձև կոճակ, որ հակառակ կողմից ունի կամրջակ՝ իրի վրա ամրացնելու համար և երեսի կողմից՝ իրար մեջ առած շրջաններ (նկ. 5—8), մի փոքրիկ



Նկ. 10. Երկաթե մանրադի շեղր, գաշույնների դասասկներ
և սրոցաբաբեր (2-րդ դամբարան):

ապարանջան (նկ. 5—5), պղնձե անամեջ կիսախողովակի մի քանի կտորներ և 30-ից ավել սարդիոնի ուլունքներ (նկ. 4—2): Հենց նույն տեղում գտնվեցին լոթ օբսիդաքարի նետասլաքներ, սուր եզրերով, սուր ծայրերով և երկարավուն տեսքով (նկ. 7, 1—4):

Երկրորդ դամբարանն աչքի էր ընկնում իրերի բաղմազանությամբ, ամաններից մեկի մեջ հայտնաբերվեց պղնձե ասեղ, պղնձե հերուն՝ քառանկյունի սրածայր արմատով (նկ. 5, 1—2), և փոքրիկ սրոցաքար, որն իր ծայրին ունեւր երկաթե օղակ (նկ. 10—5): Մնացած կմախքների մոտ իրեր չկային:

Դամբարանի երկրորդ շերտում, ոսկրերից և ամաններից 35—40 սմ ավելի խորության մեջ գտնվեցին կավե հինգ ամաններ:

Երկրորդ դամբարանի երկրորդ շերտում (նկ. 11) գտնվեց նաև կավից պատրաստված մի բաժակ: Իրար մոտ գտնվող երեք

ամաններից մեկի մեջ գրված էր բրոնզե մի մազխիլ (պինցետ) (նկ. 5—3) նույն ամանների տակ, դամբարանի հատակում:

Այս դամբարանի մասին մի փոքր հաղորդում մենք տպագրել ենք 1952 թ. КСИИМК-ի вып. XLVI-ում, էջ՝ 62—71:



Նկ. 11. Երկրորդ դամբարանի երկրորդ շերտը պեղելուց հետո:

Նշված հաղորդումը հիմք ընդունելով Հ. Ա. Մարտիրոսյանը անգլրադարձել է Գոլովինոյի դամբարանադաշտին և մեր պեղած երկրորդ դամբարանը, ինչպես և այդ դամբարանից հանված իրերից մի քանիսը նկատի առնելով հանգել է ոչ ճիշտ եզրակացություն: Նա գրում է. «Ենթադրել, որ այս դամբարանում հղել են

հիմնական և ուղեկցող թաղումներ ճիշտ չէր լինի, քանի որ, ոչ իրենց դրությամբ, ոչ էլ իրերով այս դամբարանները չեն տարբերվում մեկը մյուսից: Ամենից հավանականն այն է, որ այստեղ 100—150 տարիներին ընթացքում թաղվել են միևնույն հայրիշխանական ընտանիքի անդամները¹:

Այնուհետև, Մարտիրոսյանը Գոլովինոյի դամբարանադաշտի կուլտուրան համեմատում է Խրտանոցի ձորի կուլտուրայի հետ:

Ամենից առաջ պետք է հաշվի առնել, որ քացի երկրորդ դամբարանի նյութերից Գոլովինոյում մինչև այժմ պեղված բոլոր դամբարանների նյութերը, ժամանակաշրջանի իմաստով, չեն համընկնում Խրտանոցի կուլտուրայի հետ:

Այնուհետև, Գոլովինոյի երկրորդ դամբարանում կատարված թաղումը չէր կարող որևէ պատահական դիպվածքի հետևանք լինել, քանի որ, ինչպես տեսանք թաղման նկարագրության մեջ, ննջեցյալները բաժանված էին երկու խմբի և գտնված իրերը, զբոսի ընթացքում հավաքել ենք ճակատի պատին մոտ թաղված երեք ննջեցյալների մոտից: Հետևապես այստեղ թաղվածների մեջ եղել են այսպես կոչված արտոնյալ և ենթակա մարդիկ:

Թվում է, որ պետք է հաշվի առնվի նաև տվյալ ժամանակի այն շատ կարևոր սովորույթը, որի հիման վրա արևնակից ընտանիքի համար պատրաստած դամբարանում թաղված ննջեցյալները անվիճելիորեն պետք է գրավեին դամբարանի ներսում իրենց համար հատկացված որոշակի տեղերը: Այս դեպքում նրանք պետք է դամբարան գրվեին հերթականությամբ և յուրաքանչյուրի մոտ պետք է թաղվեին իրենց անձնական սեփականությունը կազմող իրերը (աշխատանքային գործիքները, զենքերը, զարդարանքը, կավամանները և այլն):

Պեղման մանրամասնությունները և ուշադիր ուսումնասիրությունները հաստատում են, որ այստեղ թաղումը կատարվել է միաժամանակ և դամբարանը ծածկվել է սալ քարերով ու վերջնականապես փակվել է նրա «մուտքը»: Պեղումից պարզվեց, որ բոլոր կողմերից մշտապես փակ դամբարանում սխտեմատիկ թաղումներ լինել չէր կարող:

Արտոնյալ և ոչ արտոնյալ ննջեցյալների թաղումն հաստատող փաստ է նաև այն, որ ազատ տարածություն էր թողնված ճակատի պատին հենած երեք և կենտրոնում թաղված 15 կմախք-

ների միջև: Հավասար իրավունքներով օժտված մարդիկ պետք է թաղվեին հավասար պայմաններում, և նրանց ունեցվածքի մեջ ևս մեծ տարբերություն չպետք է լիներ:

Մենք հաշվի ենք առել քննությունն ենթակա ժամանակաշրջանի դաժան սովորությունը, երբ հասարակության մեջ աչքի ընկնող մարդ էր մահանում նրա հետ բռնի սպանվում և թաղվում էին նրա մերձավորները, ասենք կիներ և ծառաները:

Մեր ձեռքի տակ եղած օրինակներից բերենք ևս մեկը: Աստղածորում կատարած պեղումների ժամանակ բացած 3-րդ դամբարանում թաղված էր 35 մարդ, որոնցից մեկի ձախ ոտքի ազդր-ոսկորի մեջ խրված էր բրոնզի նետասլաք: Ոսկրի ալժմյան դիրքը թողնում է այնպիսի տպավորություն, որ տվյալ անձը կարծես այդ վերքից չի մահացել, բայց հավանականն այն է, որ նա մահացել է ինչպես այդ, այնպես էլ այլ ստացած հարվածների հետևանքով: Նշված փաստը հաշվի առնելով կարծում ենք, որ նետահարվածը բռնությունը սպանվել և թաղվել է իր տիրոջ հետ՝ հանդերձյալ կյանքում նրան սպասարկելու նկատառումով:

Այստեղ նշված և մեր ձեռքի տակ եղած բազմաթիվ այլ փաստերից ելնելով եկել ենք այն համոզման, որ Գոլովինոյի 2-րդ դամբարանում թաղումը կատարվել է մեկ անգամ և այդ կապված է ունեցվածքի տեր և տվյալ ժամանակի հասարակության մեջ որոշակի դիրք ունեցող մի անձնավորության մահվան հետ:

Տիրոջ մահվան հետևանքով, ժամանակի սովորության համաձայն, ի պատիվ նրա, հավանաբար, սպանվել և թաղվել են նաև մերձավորները, ռազմազերինները և գուցե ստրուկները: Անվանի մարդկանց հետ սպասարկող անձնակազմ թաղելու սովորությունը հարատևել է երկար ժամանակ: Այդ առթիվ ինչպես օտար, այնպես էլ հայ պատմիչների մոտ եղած օրինակները սակավաթիվ չեն:

Օգտակար կլիներ հիշեցնել Հոմերոսի «Իլիական»-ից մի բնորոշ հատված: Աքիլլեսն իր սիրելի ընկեր Փատրոկլեսի սպանվելուց հետո երդվում է վրեժխնդիր լինել Հեկտորից: Եվ անա Հեկտորին սպանելուց հետո, Աքիլլեսը չոքում է նրա դիակի մոտ և գոչում:

«Ուրախացիր, ով Փատրոկլես, անա կատարում եմ ինչ որ քեզ ուխտել էի: Հեկտորի դին քարշ ի քարշ վաղը շներին կեր պիտի տամ և տասներկու տրոյացի պատանիների զոհ բերեմ քո պատվին»¹:

¹ Հոմերոս, Իլիական, Երևան, 1940, էջ 220:

Իսկ հաջորդ օրվա հանգիսավոր դիակիզման արարողությունը Հոմերոսը նկարագրում է հետևյալ կերպ.

«Այնուհետև Աքիլլը պատվիրեց չորս ամենի նոժույգ բերել, որ դրանք էլ իր ընկերոջ զոհ գնան: Նա ինքը մորթեց դրանց և, հոգոց հանելով, փախտակույտի վրա ձգեց: Վերջապես գերի բռնած տասերկու տրոյացի պատանիներ էլ բերվեցին և մորթուվելով խարույկի շուրջը գրվեցին»¹, (ընդգծումն իմն է—Հ. Մ.):

Ինչպես երևում է, Գոլոպիսոյում մեր պեղած համար երկրորդ դամբարանի առաջին շերտը (վերինը) կապված է ոչ թե դիպվածորեն մահացածների մի խմբի, կամ մի ընտանիքի, թերևս նաև տոհմի հետ, և այնտեղ սիստեմատիկորեն կատարել են բնական մահով ընկածների թաղումները, այլ ավելի հավանական է, որ դամբարանը պատկանել է մի որևէ տեղաբնիկ ցեղի առաջնորդի կամ ցեղի մեջ այս կամ այն չափով աչքի ընկած մի անձնավորության, որն, ինչպես ասացինք, ունեցել է իր ռազմագերիները կամ ստրուկները, որոնք թաղվել են նրա հետ:

Վեցերորդ դամբարանը գտնվում էր անտառապատ բարձր բլուրի ծառազուրկ թեք ստորոտում, ծածկված էր երկու մեծ շերտաքարերով: Սրա հարավ-արևելյան կողքի պատն ունեի՝ 1,16 մ երկարություն, հյուսիս-արևմտյան պատը կաղմված էր երկու քարերից, դամբարանի լայնությունը հասնում էր 1,85 մ, խորությունը ծածկի քարի տակից՝ 1,56 մ, (տե՛ս հատակագիծ և կտրվածք):

Դամբարանը լիքն էր ավազախառն հողով, որ ներս էր լցվել հոսած ջրերի օդնությունով:

Մեկ մետր խորանալուց հետո, ննջեցյալի ոտքերի կողմում բացվեց, դամբարանի լայնքով չորս կանոնավոր շարքերով շարված 17 տարբեր մեծություն և ձևի գեղեցիկ կավամաններ (նկ. 12):

Բացի դրանից, դամբարանի հյուսիս-արևելյան անկյունում գտնվեցին իրար մեջ դրված վեց լայնաբերան քանդակազարդ ղուղեր. սրանք դամբարան են դրվել հավանաբար դատարկ վիճակում:

Սկզբնական շրջանում դամբարանը հողով լցված չի եղել: Հայաստանում և ընդհանրապես Անդրկովկասում առաջին հազարամյակի սկզբում (մ. թ. ա.) դամբարանների զգալի մասը հողով չեն լցվել:

¹ Անդ, էջ 224:

Մեր նկարագրած դամբարանները հողից ազատ թողնելու սովորույթը կապված է եղել մի կողմից ննջեցյալի հետ թաղված գործիքները, զենքերը, զարդարանքը և կավամանները շարդելուց¹, ոչնչացնելուց փրկելու, իսկ մյուս կողմից ննջեց-



Նկ. 12. Վեցերորդ դամբարանի ընդհանուր տեսքը պեղելուց հետո:

յալի ոգու հանդեպ ունեցած վախից, և այն համոզմունքից որ ոգին մարմնից անջատվելուց հետո, իբր թե շարունակում է ապրել և ունենում է այն պահանջները, ինչ որ մարդն ունեցել է կենդանության ժամանակ:

Նախաբնիկը համոզված էր, որ մարմնից անջատված ոգին հողի տակ թաղելի-պահելը և նրան դամբարանից դուրս գալու հնարավորությունից զրկելը, կարող էր տեղիք տալ ոգու բարկությանը, և միաժամանակ կարծվում էր, որ ոգին կենդանի մնացածներին կարող էր մեծամեծ չարիքներ պատճառել: Այստեղից էլ առաջացել է այն համոզմունքը, թե ննջեցյալի ոգին պետք է հողից ազատ դամբարանում անարդել շրջի, որպեսզի դուրս գալու հնարավորությունից չզրկվի:

Ոգեպաշտական այս հասկացողության հետ պետք է կապվի ննջեցյալների հետ դամբարան դրվող կենցաղալին այն բոլոր ա-

¹ Հակառակ սրան, կա նաև կավամանները ջարդելու կամ ջարդված կավամանների մի յանի կտոր դամբարան դնելու սովորույթը, որը կապված էր մասն աբողջով փոխարինելու հասկացողության հետ:

առարկաները, որոնց կարիքը նա դգացել և դրանք օգտագործել է իր կենդանության ժամանակ: Հավանաբար այս հասկացողություններն ու պատկերացումներն էլ հիմք են ծառայել դամբարանները հողով չլցնելուն:

Վ. Կ. Նիկոլսկին քաղվածորեն մեջ է բերում Բոգորադ Տանի՝ չուկոտյան «բանիմաց» կախարդի պատմածից գրի առած մի դեպք, ըստ որի ավստրալացիների պատկերացմամբ բոլոր իրերը կյանք ունեն: Լամպը քայլում է, տան պատերն ունեն իրենց ձայնը: Մի-զանոթն անգամ ունի իր երկիրը և վրանը, կինը և երեխաները: Վաճառքի համար պարկերում պահվող մորթիները գիշերները խոսում են: Եղջերուի եղջուրները գումակի սալակներով գիշերները շրջում են ննջեցյալների գերեզմանների շուրջը, իսկ առավոտները կանգնում են իրենց նախկին տեղերում¹:

Այսպիսով, ինչպես երևում է մեջ բերածից, ավստրալացիները բոլոր առարկաների և իրերի մեջ կյանք ու ոգի են պատկերացրել: Խոսելով եգիպտական աստվածների մասին Մարքսն ասում է՝ բոլոր աստվածները թաքնվեցին կենդանիների մորթիներով:

Ինչպես երևում է չէր պատկերացվում կենդանի մնացածների և մեռածների միջև եղած հակադրությունը և որոշակի տարբերություն չէր դրվում նրանց միջև, չէր պատկերացվում նաև կյանքը և մահը: Այսպես է եղել առաջ և հենց այստեղից էլ առաջացել է ննջեցյալների նկատմամբ ունեցած հոգապարտությունը:

Այսպիսի սովորության հիմքում ընկած է անիմիզմը, հանդերձյալ կյանքի մասին ունեցած հավատը, ննջեցյալի նկատմամբ ունեցած վախը:

Հավանական է, որ հենց այս հասկացողության հետ է կապվում նաև պաղած թաղման սովորությունը: Թաղման այս ձևը, ինչպես երևում է, բավականաչափ տարածված է եղել, այն հանդիպում է ոչ միայն Անդրկովկասում, այլ Անդրկովկասից դուրս Սովետական Միության շատ վայրերում և այլ երկրներում, ինչպես օրինակ Պորտուգալիայում (Կապեսոդ, Արլուեդո), Ճապոնիայում, Հյուսիսային Ամերիկայում (Ֆլորիդա) և այլ վայրերում:

Պաղած թաղումը նույնպես ինչպես և թաղման մյուս ձևերը կապված են կենցաղի, սովորույթի, ննջեցյալի նկատմամբ ունեցած վախի, հանդերձյալ կյանքի մասին ունեցած սխալ պատկե-

¹ В. К. Никольский, Очерк первобытной культуры, 1928, стр. 196.

բացումները և հասկացողությունների հետ, միաժամանակ որոշ առանձնահատուկ արարողությունների, տոհմերի ու ցեղերի միջև եղած փոխադարձ ազդեցությունների ու նրանց կենցաղում եղած առանձնահատկությունների հետ:

Կարծիքներ են եղել, ասում է Նիկոլսկին, որ պզտիկ թաղման ժամանակ ննջեցյալների միտն անջատում էին ոսկորներից և ոսկորները դասավորելով թաղում:

Այս խմբին պատկանող թաղումների ժամանակ ննջեցյալների նկատմամբ գոյություն ունեւ սարսափ և այլ պատժառով ձգտում էին կուչ բերելով՝ ջարդել կամ կապկապել ննջեցյալների ոսկորները, որպեսզի վերջիններս կենդանի մնացածներին վնաս չպատճառեն:

Բ. Բ. Պիոտրովսկին ասում է՝ հանդերձյալ կյանքի մասին ունեցած հավատը մարդկանց հասցրեց այն բանին, որ ննջեցյալների հետ գերեզման էր իջեցվում ուտելիք և խմելիք, նուրբ կաթնալի կահկարասի, գործիքներ, զենքեր և զարդարանք¹:

Ֆրիդրիխ Էնգելսը նախաբնիկ կրոնապաշտամունքային հասկացողությունների ու համոզմունքների, մտածողության և զգայնությունների մասին գրում է.

«Արդեն իսկ այն չափազանց հեռավոր ժամանակից սկսած, երբ մարդիկ, տակավին չունենալով ոչ մի գաղափար իրենց մարմնի կազմվածքի մասին և չկարողանալով բացատրել երազները, եկան այն պատկերացման, թե նրանց մտածողությունն ու զգայությունները ոչ թե նրանց մարմնի գործունեությունն է, այլ ինչ որ նախասկզբի առանձին հոգու, որ ապրում է այլ մարմնում և նրան թողնում է մահվան ժամանակ, — արդեն այդ ժամանակից սկսած նրանք պետք է խորհրդածեին այլ հոգու դեպի արտաքին աշխարհն ունեցած հարաբերության մասին: Եթե այդ հոգին մահվան լռակին անջատվում է մարմնից և շարունակում է ապրել, ապա ոչ մի առիթ չկա նրա համար առանձին մահ հնարելու: ...Անձնական անմահության տաղտկալի պատկերացումն ամենուրեք ժաղում էր ոչ թե կրոնական մխիթարության պահանջից, այլ այն պարզ հանգամանքից, որ մարդիկ, մեկ անգամ ընդունելով հոգու գոյությունը, ընդհանուր սահմանափակությունից բխող

¹ Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Ленинград, 1949, стр. 89.

անօգնականության պատճառով չէին կարող բացատրել, թե հապառուր է գնում հոգին մահվանից հետո»¹:

Հանգերձյալ կյանքի մասին ունեցած պատկերացումներն անցողիկ բնույթ չեն կրել, այն սերնդե-սերունդ անցնելով հարատևել են հազարամյակներ:

Հեթանոս հայերն առաջնորդվել են նույնպիսի հասկացողություններով, սովորություններով և պատկերացումներով հանգերձյալ կյանքի մասին, ինչպիսին ունեցել են իրենցից երկու և նույնիսկ երեք հազար տարի առաջ Հայաստանի հողի վրա ապրող բնիկները: Նկատվում է օրգանական կապ Հայաստանի նախաբնիկների և հեթանոսական շրջանի հայերի թաղման սովորությունների միջև: Նույն տարածություն վրա անընդհատ ապրող բնիկների կուլտուրան, սովորույթն ու կենցաղը, բնական է, չէր կարող անհատ կորչել, կամ ավելի շուտ իր ազդեցության ոլորտի մեջ չնեղորակվել այն ժողովուրդին, որն օրինական հաջորդն է տեղաբնիկ տոհմերի ու ցեղային միությունների:

Մովսես Խորենացին հենվելով հայերի մեջ պահպանված ավանդությունների վրա, Արտաշես թագավորի թագման մասին գրում է.

«Եւ գրէ, իթէ որչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանալք և հարճք և մտերիմ ծառայք. և որպիսի շուք բազմագիմիս արարին առ ի պատիւ դիտն, քաղաքականաց կարգօք և ոչ որպէս զբարբարոսս: Դազաղքն էին ոսկեղէնք, գահոլքն և անկողինքն բեհեզեալ. և պատմուճանն որ զմարմընովն՝ ոսկէթել. թագ կրպեալ ի գլուխն, և ղէնն ոսկեով առաջի եղեալ²: Այնուհետեւ Խորենացին ասում է՝

«Ջամանէ երգիչքն Դողթան առասպելաբանեն այսպէս. Եթէ ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց. դժուարի, ամեն, Արտաւազդ՝ ստելով ցհալրն. որ Վինչ դու գնացեր, և զերկիրս, ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞ւմ թագաւորեմ»³:

(«Եւ (Արիստոնը) գրում է, թե ո՛րքան բազմություն մեռավ Արտաշեսի մահվան ժամանակ, նրա սիրելի կանալքը, հարճերը և մտերիմ ծառաները, և ինչպես բազմատեսակ շքեղ պատիվներ

¹ Ֆ. Էնգելս, *Լյուդվիգ Ֆոյերբախը, և գերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը*, Նրևան, 1940, էջ 24—25:

² Մ. Խորենացի, *Հայոց պատմություն*, Թիֆլիս, 1913, էջ 188:

³ Անդ, էջ 191—192:

մատուցին դիակին, քաղաքակիրթ (ազգերի) կարգով, և ոչ թե բարբարոսների նման: Նրա գաղաղը, ասում է, ոսկեղեն էր, գահը և անկողինը բեհեզից և մարմինը պատող պատմունճանը ոսկեթել, գլուխը թաղ դրած, ոսկյա զենքն առջևը¹:

Շնրա մասին Դոլովինի երգիչներն այսպես են առասպելաբանում. Արտաշեսի մահվան ժամանակ, հեթանոսական սովորով թյամբ, շատ կոտորածներ էին լինում. սրա վրա, ասում են, Արտավազը նեղանում է և ասում է հորը.

Շերբ դու գնացիր,
Ու բոլոր երկիրը քեզ հետ տարար,
Ես այս ավերակների վրա
Ի՞նչպես թագավորեմ²):

Բնական է, որ օրինական հիմունքներով մենք իրավունք ունենք հեթանոս հայերի մեջ գոյություն ունեցող այս սովորույթը բազմաթիվ թեկերով կապել Հայաստանում կատարված, բազմանձ և հարուստ թաղումների հետ, մի երևույթ, որ Հայաստանից վերցրած տասնյակ օրինակներով կարելի է հաստատել և այլ օրինակների մեջ գտնել նյութական կապ:

Այսպես, օրինակ՝ 1907 թ. Ներքին Գետաշեն գյուղում (Մարտունու շրջան) Ե. Լալայանը բաց արեց մի գերեզմանաթումբ, որը գեանի մակերեսից բարձր էր 50 սմ: Այս գերեզմանի մեջ դրված էր քառանիվ մի քանդակազարդ սալ, որի վրա պատկած էր մարդու կմախք, Սալի լծի առջևում գտնվեց սալապանի և չորս եղների ոսկորներ, իսկ սալի շուրջը՝ դամբարանի պատերին մոտ՝ 13 մարդու կմախք, որոնք զգված էին դամբարանի մեջ վերևից խառնիխուռն՝ մեծ մասամբ զլխով դեպի դամբարանի հատակը: Սալի վրայինը «գերեզմանատիրոջ» կմախքն էր, որ ուներ բրոնզե զենքեր ու զարդարանք իշխանական երկժանիի հետ միասին³:

Հասկանալի է, որ այստեղ թաղել են մի մարդու, որը հասարակության մեջ իր դիրքով, ունեցած ազդեցությամբ և հարըս-

¹ Մ. Խորենացի, Հայոց պատմություն, թարգմանություն Ստ. Մալխասյանի, Երևան, 1940, էջ 128:

² Նույն տեղում, էջ 129:

³ Ե. Լալայան, Դամբարանների պեղումները Պորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 100—101:

տուժյամբ տարբերվել է տվյալ հասարակության մյուս անդամներից, հենց սրա հետ էլ բռնությամբ թաղել են նրա 13 ծառաներին՝ հավանաբար ուղղափառների ստրուկներին:

Ե. Հալալյանը Ղշլաղի (Ն. Բալաղետի շրջան) դամբարաններից մեկում հայտնաբերել է 18 մարդու կմախք, Ն. Բալաղետի Աղբյուրի գլուխ կոչվող վայրում մի դամբարանի մեջ 32 կմախք, Մարտունու շրջանի՝ Լիճք գյուղի հինգերորդ դամբարանում բաց է արել պաղած գլուխով թաղված 20 մարդու կմախք¹:

1951 և 1952 թթ. մենք Մարտունու շրջանի Աստղաձոր գլուղում (նախկին Ալիզրիս) պեղել ենք 3 դամբարան, որոնցից առաջինի մեջ կար 12, երկրորդի մեջ՝ 13, իսկ երրորդի մեջ՝ 35 մարդ: 1951 թ. Աթարբեկյան գլուղում (Ախտալի շրջան) մի դամբարանի մեջ հայտնաբերել ենք 23 մարդու կմախք:

Սակայն ննջեցյալների հետ ուղեկիցների թաղման, ինչպես նաև «գերեզմանատերերի» հետ դործիքների, զենքեր ու զարդարանք դնելու սովորույթը հնում գոյություն է ունեցել ոչ միայն Անդրկովկասում, այլև նրա սահմաններից շատ հեռու:

Այսպես օրինակ՝ 1928 թ. Վ. Լեոնարդը Բաբելոնի Ուռ քաղաղում բաց է արել մի դամբարան, որը մինչև պեղելը թեև կողոպտված էր, բայց այդ դամբարանից դարձյալ բավականաչափ նյութ է գտել: Այստեղ եղել է Շաբադ քաղաքի համար զոհված 60 մարդու կմախք, մի արծաթե նիզակ՝ 61 սմ երկարությամբ, ոսկուց պատրաստած եզան գլուխ, ոսկե թերթիկով պատած ցուլի գլուխ: Յլի աչքերը, եղջյուրների ծայրերը լազուր քարերից են շինված եղել: Գտնվել են ոսկե ամաններ, սումերական խճանկար, որի վրա կա մարդկանց և կենդանիների պատկերներ:

Հայոց Արտաշես թագավորի թաղման հետ կապված Մովսես Խորենացու Հայոց պատմությունից մեջ բերած նկարագրությունը ոչ թե պատահական երևույթ է, այլ դարավոր կենցաղի ու սովորության, ինչպես նաև հանդերձյալ կյանքի մասին ունեցած պատկերացումների հետ կապված ընդհանուր հասկացողություն, որը պահպանվեց հալերի մեջ մինչև քրիստոնեություն մուտքը:

Որքան հնարավոր եղավ դատել Գոլովինոյի վեցերորդ դամ-

¹ Ե. Հալալյան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931:

բարանում պահպանված ոսկորների աննշան մնացորդներից, ալյուտեղ թաղված է եղել ձիու գանգ և խոշոր եղջերավոր կենդանու միայն ձախ կողի՝ 4-րդից 8-րդ կողոսկորներից 4 կտոր և ձախ աղբրոսկրի մի մասը:

1952 թ. Սեանա լճի ցամաքած տարածություն վրա կղզու դիմաց մեր պեղած բոլոր 13 դամբարանների մեջ էլ թաղված էին խոշոր եղջերավոր անասունի ձախ կողմի 3-րդից 8-րդ կողոսկրներից 3—4 հատ և ձախ աղբրոսկրը:

Ննջեցյալի հետ կենդանու միայն ձախ կողի ոսկորներից դամբարանը դնելը կապված չէ՞ արդյոք կենդանիների մի կողմը ուտելի, մյուս կողմն «հարամ» համարելու սովորություն հետ, որ պիսին մինչև վերջերս էլ որոշ ազգերի, այլ թվում նաև հայերի, մեջ կիրառվում էր¹:

Հնադիտություն մեջ հայտնի է, որ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի տերիտորիայում ինչպես նաև Անդրկովկասի սահմաններից դուրս բացված հնագույն շրջանին պատկանող շատ դամբարաններից, հայտնաբերվել են խոշոր և մանր երջերավոր կենդանիների ոսկորների մի մասը, իսկ երբեմն էլ կենդանու ամբողջական կմախքը: Շատ տարածված այս սովորություն կապված լինելով կենցաղի հետ առնչվում է նաև կրոնա-պաշտամունքային հասկացողությունների հետ, երբ ննջեցյալի հետ դամբարան էր դրվում ոչ թե ամբողջ կենդանին, այլ նրա մի մասը:

Ի. Վ. Սինիցինը 1948 թ. արևմտյան Ղազախստանում իր կատարած պեղումների ժամանակ Կուրպե-բայի 4-րդ գերեզմանաթմբում բազմաթիվ առարկաների հետ միասին դտավ մի ոչխարի թիակ²:

Աստվածներին մեծարելու, նրանց զայրություն անկարգ հոտի դեմ մեղմելու նպատակով բավական է, որ ամբողջ հոտի փոխարեն զոհաբերել հոտի առջևից գնացող «անկարգ» կենդանուն, որը կարող է փոխարինել ամբողջ հոտին:

«Աստվածների զայրություն վերացնելու համար, բավական էր,

¹ Տե՛ս մեր «Հնագույն դամբարանադաշտ Ցամաքաբերդ գյուղի մոտ» աշխատանքը, տպագրված՝ ԳԱՀԱՍ. գիտությունների «Տեղեկագիր», № 5, 1954, էջ 88, 90:

² И. В. Сеницын, Археологические памятники по реке Малый Узень (Саратовская обл. и Западный Казахстан). Кр. сообщения ИИМК, 1950, XXXII. стр. 107.

որ ժողովրդի գործած ամբողջ մեղքերը դնելին «դուրս ընկած» ալծի վրա և քշելին նրան տափաստանները¹:

Ստացվում է այն, որ մեկ մասը կտրող է փոխարինել ամբողջին և ամբողջ «հոտի փոխարեն» աստվածներին կտրելի է զոհաբերել «հոտի առջևից» զնացող ալծին: Ճիշտ այնպես, ինչպես վեցերորդ դամբարանը դրել են խոշոր հղջերավոր անասունի միայն ձախ կողոսկրներից մի քանիսը և ձախ աղբյուրից մի կտոր:

Այսանդ երևում է մասն ամբողջով փոխարինելու հասկացողությունը, որի արմատները թողված են հազարավակների խորքում:

Ի Բ Ե Ր Ի Ք Ն Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ը

Քննելով վեցերորդ դամբարանում գտնված իրերից ամենից ուշագրավները, անհրաժեշտ ենք համարում նկատել, որ «գերեզմանատները» զինված է հղել իր ժամանակի զենքերի առավել ազդու տեսակներով՝ նեառ աղեղով, մեծ սրով և լանջապանակով:

Յույց տված դամբարանում գտնված օբյեկտներից սլաքները եռանկյունաձև են, կարճ, ծայրերը և հղերքները սուր, լավ մշակած կոթի կողմում երկճյուղանի. սլաքների այս տեսակը հանդիպում է Սևանի ավազանում, Կիրովականում, Արթիկում, Գետաբեկում՝ Ա. Ա. Իվանովսկու, Թրիալեթիում՝ Բ. Ա. Կուֆտինի պեղումներից:


Վեցերորդ դամբարանում գտնված պղնձե սուրը դեղեցիկ է և հարմար: Ուշագրավն այն է, որ սուրը գտնվել է լանջապանակի մնացորդների հետ: Սրի երկարությունը հասնում է 72 սմ, շեղքի լայնությունը՝ 8 սմ, դաստակի երկարությունը՝ 12,7 սմ: Դաստակի վրա, երկու կողմում թողած հատակ կամրջակների միջով անց է կացված փայտ, իսկ փայտը զարդարված է պղնձե մանր պատկերով: Նույնանման զարդարուն դաստակով գեղեցիկ դաշույն 1957 թ. գտնված է Լճաշենի III գերեզմանաթմբից: Սրի շեղքի երկու երեսին էլ վերից — վար իջնում են 8-ական ակոսներ: Շեղքի երկու երեսին, նրա ամենալայն մասում փորված է կիսալուսնի երկու նշան: Սուրը կշռում է 953 գրամ (նկ. 13):

Պեղման միջոցին սրի դաստակը գտնվում էր ննջեցյալի աջ ձեռքին, իսկ ծայրը՝ աջ ուսին՝ «հարվածելու պատրաստ» դիրքով: Ննջեցյալը պառկեցրած էր հյուսիս-արևմտյան պատին մոտ,

¹ В. К. Никольский, Очерк первобытной культуры, 1928, стр. 193.

աջ կողքի վրա, դեմքով արևմուտք, ոտքերը և ձեռքերը կուչ բերած դրուժվածք:

Նույն ժամանակաշրջանին պատկանող և մոտավորապես նույն չափի սուր, բայց առանց շեղքի վրա եղած ակոսների, գտնվել է Կիրովականի թագավորանիստ բլուրի վրա (նկ. 14):



Նկ. 13. Պղնձե սուր (15-րդ դամբարան):



Նկ. 14. Բրոնզե սուր Կիրովականի թագավորանիստից:

Մի նույնաման սուր էլ գտել է Իվանովսկին Գետաբեկում¹ Սամթավրոյի № 591 դամբարանում գտնված երկու սրերից մեկին իր արտաքին տեսքով նմանվում է Գոլովինոյում գտնված հիշյալ սրին: Նույնատիպ սրեր հայտնի են նաև Ուզունլարից, Ակներից, (Ունակ), Կախեթից և Անդրկովկասի այլ վայրերից:

Սուրը, սառը զենքի բոլոր տեսակների մեջ իր հարվածի ուժով և ազդեցութվամբ պաշտպանության և հարձակման դեպքում կատարել է վճռական դեր: Ձենքը թեև եղել է նախաքնիկի անդամաճան-վատահելի ուղեկիցը, բայց մեզ հետաքրքրող ժամանակի համար այն հանդիսացել է նաև թշվառութուն բերող միջոցներից մեկը: Ձենքի որոշ տեսակներ, որոնք մարտերի մեջ ավելի վճռական դեր էին կատարում՝ ֆետիշացան:

Այդպիսիներից մեկը սուրն էր:

¹ А. А. Ивановский, Материалы по археологии Кавказа, в. VI, Москва, 1911, стр. 132.

Սուրը գործադրութեան մեջ մտնելով ուժեղացնում էր հարվածի ուժը, որի հետեանքով դաշույնը կորցնում էր իր առաջնակարգ տեղը:

Թեքեա հնարավոր լինի կարծել, որ սուրը հանդես եկավ ստղավարտի, վահանի և լանջապանակի առաջացման հետեանքով, երբ հարձակվողը պահանջ զգաց ծանր զենքի, որպեսզի ուժեղ հարվածներով կտրատի մետաղե շերտի տակ պաշտպանվող իր հակառակորդին և խորտակի նրա զինավորութունը: Բայց սուրը, ինչպես նաև լանջապանակն ու ստղավարտը, մեղ հետաքրքրող ժամանակաշրջանում պատրաստվում էին մետաղներից՝ պղնձից և բրոնզից, հետևապես շարքային զինվորների համար դրանք անմատչելի էին: Զենքի արդ տեսակներով կարող էր զինվել միայն վերնախավը, այդ թվում նաև զինվորական առաջնորդները: Այդ առումով ուշագրավ է վեցերորդ դամբարանի իրերի խմբում կաշվե հյուսվածքի և պղնձե տարբեր մեծութուն ունեցող դարդակոճակներից ու վահանիկներից պատրաստած լանջապանակը (նկ. 15):

Լանջապանակի կաշվե հյուսվածքը, դարդարված էր պղնձե տարբեր ձևի և մեծութեան չորս տեսակի դարդակոճակներով և վահանիկներով, (նկ. 16բ) սրանք ամբողջված են եղել կաշվի հյուսվածքի վրա, իրենց հակառակ կողմերում ունեցած փոքրիկ կամ ըրջակներից անցկացվող կաշվե կապով կամ թելով:

Երկրորդ հազարամյակի վերջերին, կամ առաջին հազարամյակի սկզբներին (մ. թ. ա.) վերաբերող լանջապանակներ, որքան մեղ հայտնի է, Հայաստանում չի հանդիպել, բայց 1951 և 1952 թվականներին Կարմիր բլուրում (Թեյշեբախում) գտնվեցին թերթիկավոր դրահի ֆուցորդներ, սրանցից մի քանիսի վրա դրված է Արգիշտիի անունը (VIII դար մ. թ. ա.): Նույն 1951 թ. պեղումների ժամանակ թերթիկավոր դրահի մի քանի բեկորներ գտնվեցին նաև Դվինում (10—11-րդ դարեր):

Հնագիտական սակավաթիվ տվյալներով հաստատվում է, որ լանջապանակն Անդրկովկասի բնիկներն սկսել են օգտագործել դեռևս ուշ էնեոլիթի շրջանում:

Բ. Ա. Կուֆտինը Թրիալեթում կատարած պեղումների ժամա-

¹ Լանջապանակի և բոլոր դամբարանների գրչանկաբները կատարել է նկարիչ Պատրիկ Առաքելը: Իրերի լուսանկարները՝ Թանգարանի լուսանկարիչ Պողոս Գրիգորյանը: Դամբարանները լուսանկարել է Մկրտիչ Մարտիրոսյանը:

նակ Փարվանա լճի լիճնանցքում, մի դամբարանում, գտավ պղնձե լանջապանակի բեկորներ, որի մասին նա գրում է.

«Դամբարանում կար միաձուլ պղնձյա դաշուլնի լալն և կարճ շեղք, որի դաստակն ուներ ծակեր, գտնվեցին նաև նիզակի կոպիտ ծալք, նույնպես միաձուլ պղնձից, հաղիվ նկատելի կոթածուրի նեղ ծակով և պղնձե լանջապանակի բեկորներ, վեց ուսուցիկներով: Վերջիններս ծածկված են պղնձե սրով և ամրացնող թուկերի համար արված ծակոտիներով:

Դոլանլարում (Ադրբեջանական ՍՍՌ) մի դամբարանից² հայտնաբերված բրոնզե առարկաների մեջ հանդիպում են նաև լանջապանակի մետաղներ, որոնց մասին Ն. Վ. Մինկևիչ-Մուստաֆան գրում է.

«Առարկաները պատրաստված են բրոնզե թիթեղից և, հավանաբար, որպես զարդարանք կարվել են կոպիտ կաշվի վրա... № 1172 առարկան ևս կարվել է կտորի վրա, որպես զարդարանք և միաժամանակ ծառայել է որպես լանջապանակի ճարմանդ³:

Ինչպես երևում է մեջ բերումից Մինկևիչ-Մուստաֆան լանջապանակի բրոնզե վահանիկներին պաշտպանական նշանակությունից բացի վերագրում է նաև զարդարանքի և շքեղության ֆունկցիա: Մեր կարծիքով հեղինակն այդ հարցում իրավացի է, որովհետև լանջապանակները հնում ծառայել են նաև որպես զարդարանք և ունեցվածքը ցուցադրելու մի միջոց:

Աֆրիկյան Դինկա ցեղի մեջ մինչև վերջերս գոյություն ունեին այն համոզմունքը, որ մարդկանց անձնական ունեցվածքը զարդարանքի ձևով ցուցադրումը գեղեցկություն է:

«Թանկարժեքը գեղեցիկ է թվում, որովհետև նրա հետ զուգորդվում է հարստության գաղափարը: Կրելով իր վրա դիցուք քսան ֆունտ երկաթե օղակներ, Դինկա ցեղի կինը իրեն և ուրիշ-

¹ Б. А. Куфтин, Археологические раскопки в Тriaлетии, Тбилиси, 1941, стр.

² Դժբախտաբար գյուղերը պատահական են և սրանց մանրամասնությունները ճշտելն անհնար է:

³ И. В. Минкевич, — Мустафьева, Об археологических находках из села Доланлар, Материальная культура Азербайджана, I, Баку, 1941, стр. 61, табл. IV, рис. 9.

ներին ավելի գեղեցիկ է թվում, քան այն ժամանակ, երբ նա կրում էր միայն երկուսը, այսինքն՝ երբ նա ավելի աղքատ է¹։

Այստեղից հետևում է, որ խոսքը վերաբերում է ոչ թե հատկապես օդակներին գեղեցկությանը, այլ ունեցվածքի, հարստության ցուցադրությանը։

Գոլովինոյի վեցերորդ դամբարանի և Գետաբեկում Իվանով-սկու պեղած 61-րդ դամբարանի իրերը բավականաչափ նման են իրար։ 61-րդ դամբարանում գտնվել է 70 սմ երկարությամբ պղնձե սուր, իսկ Գոլովինոյում՝ 72 սմ նույնպիսի սուր, Իվանովսկին այդ դամբարանում հավաքել է կոնաձև մանր կոճակներ և շրջանաձև փոքրիկ վահանիկներ, Գոլովինոյի վեցերորդ դամբարանում էլ մենք հավաքել ենք նույնանման կոճակներ և վահանիկներ։ Երկու դամբարաններն էլ միևնույն ժամանակին և, ամենայն հավանականությամբ, երկուսն էլ լանջապանակով զինված զինվորական առաջնորդի են պատկանելի։

Մեր բերած օրինակներից հետևում է, որ Անդրկովկասում հնագույն շրջանից սկսած օգտագործվել է լանջապանակը, մի բան, որ մինչև այժմ հնագիտական գրականության մեջ առանձնակի քննության նյութ չի դարձել։ Ինչպես տեսանք լանջապանակը, որպես պաշտպանության միջոցներից մեկը, օգտագործվել է շատ ավելի վաղ ժամանակներում, քան մեր պեղած առկա մնացորդներն են։

Հայտնի է, օրինակ, որ հնում գլուտերը հեշտությամբ և միանգամից չեն կատարվել, նրանցից լուրաքանչյուրն սերնդե-սերունդ անցնելով կատարելագործվել է, իսկ մինչ նրա կիրառումն, անցել է երկարատև փորձությունների ժամանակաշրջան։

Բացի հնագիտական սակավ տվյալներից, հնում լանջապանակներ օգտագործելու մասին կան նաև գրավոր տեղեկություններ։ Մովսես Խորենացին նկարագրելով Հայկի ու Բելի միջև տեղի ունեցած ճակատամարտը գրում է՝

«Ծանեաւ Հայկ զխումբ վառելոյ ջուկատին, լորում Բէլ առաջի ամբոխին հկեալ հասեալ ընտրիւք և վառելովք ոմամքք. և երկար միջոց ճանապարհի ընդ նա և ընդ ամբոխն։ Եւ ինքն զխառնոց ագուցեալ երկաթի, նշանաւորօք վերջիւք, և տախտակս պղնձիս թիկնաց և լանջաց, (ընդգծումն իմն է—Հ. Մ.) և պահպանակս բարձից և բազկաց գոտեւորեալ զմէջսն, և յահելէ

¹ Գ. Վ. Պլեխանով, Գեղարվեստ և դրականություն, Հայպետհատ, 1943, էջ 12։

զսուրն խրկալովի՝ և նիզակ անարի՝ ի ձեռին իւրում աջոյ, և լահեկումն վահան, և ընդիրք լաջմէ և ՚ի ձախմէ:

Այնուհետեւ նկարագրելով բուն ճակատամարտն ասում է՝

«Ձայս իմացեալ աղեղնաւորին Հալկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ զլալնալիճն, դիպեցուցանէ զերեք թեւեանն կրծից տախտալին, և շեշտ ընդ մեջ թիկանցն, թափանցիկ լեալ՝ լերկիւր անկանի սլաքն. և ալսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի՝ լերկիւր զարկուցեալ, և փչէ զոգիւն»¹:

Ստորաբոնը խոսելով աղվանների մասին գրում է.

«Սակայն պատերազմում են հետեակ և ձիավոր, թե թեթեւ վաղեն և թե զրահավորված՝ ինչպես հայկեր»²:

Կամ նկարագրելով Հայաստանը և նրա բարիքները, միաժամանակ խոսում է երկրում եղած ձիերի արոտների և հայկական հեծելազորի մասին.

«...Արտավազը Անտոնինոսին՝ բացի մյուս ձիավորներից 6000 զրահապատ ձիավորների զորահանգես արավ, երբ նրա հետ Մարաստան արշավեց: Այսպիսի հեծելազուրք ոչ միայն մարերն ու հայերն են սիրում այլ և Աղվանները. նրանք էլ ունեն զրահավորված ձիեր»³, (ընդգծումն իմն է — Ն. Մ.):

Արդւոք այս նույն հայերը զենքի այդ տեսակը, որպես ժառանգութիւն չն^օն ստացել իրենց նախնիներից, չն^օն հետեւել այն ցեղերի հին սովորութիւններին, որոնք ապրել են իրենց տեղում, հենց հայկական բարձրականդակում:

Բայց ովքեր էին այդ կուլտուրան ստեղծող բնիկները, ինչպես էին կոչվում, հնարավոր է արդւոք որեւէ էթնիկական կապ փնտրել նրանց և հայերի միջև: Մեր ձեռքի տակ եղած հնագիտական նյութերը առայժմ չեն տալիս հնարավորութիւն պարզելու:

Ինչպես հայտնի է Հայաստանի տեղիտորիայում հնագիտական պեղումների միջոցով հայտնաբերված են առաջին հազարամյակի առաջին կեսերին պատկանող հասարակ և զարդարուն վահաններ ու սաղավարտներ, կապարձներ, զրահի ֆնացորդներ, սրեր, նիզակներ, դաշույններ, նետերի ծայրեր և այլ զենքեր, որոնց մի մասը նման է հայկականին:

Բայց, միայն Հայաստանում չէ, որ զենքերի բազմազան տեսակների հետ հայտնաբերվում են նաև լանջապանակ և զրահ:

¹ Մ. Խաղեմաչի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 36:

² Ստրաբոն, Գաղեց և թարգմանեց Ն. Աճառյան, 1940, էջ 33:

³ Նույն տեղում, էջ 61:

1943 թ. Նովոգորոդի պեղումների ժամանակ գտնվեց օդերից կազմված մի լանջապանակ¹: Ռուսաստանում լանջապանակներ են գտնվել նաև Սարմատական ժամանակներին պատկանող գերեզմանների պեղումներից:

Արևմտյան Ղազարխական տափաստաններում Սուբադին լճի ափերից ափերին բացված դամբարաններից մեկում նույնպես գտնվել է լանջապանակ: Այստեղ ննջեցյալը պառկած է եղել մեջքի վրա, ոտքերը ձգված դրոթված: «Դամբարանատեղ» զինվորականը հագնված է եղել երկաթե հյուսվածքով անթե լանջապանակ, կմախքի աջ կողմում գտնվել են ձիու ոսկւրներ՝ դանդը և չորս ոտքերի վերջավորությունները: Զինվորականն ունեցել է մի կեռ սուր 104 սմ երկարությամբ և 4, 5 սմ լայնությամբ: Այդ դամբարանի մեջ գտնվել են նաև երկաթե նետաուղքներ: Լանջապանակի երկարությունը հասնում է 1,10 մ: Լանջապանակը կազմված է 25 շարք միմյանց զուգահեռ կազմող թիթեղիկներից, սրանցից յուրաքանչյուրի վրա կան երեք անցք: Մետաղյա ալյուսիկների թիթեղիկներն ամրացված են եղել կոպիտ գործվածք ունեցող հագուստի վրա²:

Ինչպես երևում է մեր բերած օրինակներից լանջապանակներն օգտագործվել են բավականաչափ հին շրջանից և շատ վաղերերում, իսկ որպես կարգ լանջապանակները պատրաստում էին գեղեցիկ տեսքով: Այդպիսի մի գեղեցիկ լանջապանակ էլ գտնվել է Ֆրանսիայում (Գրենոբլի մոտ), որը պատկանում է 9—8-րդ դարերին (մ. թ. ա.):

Այդ լանջապանակն այժմ պահվում է Փարիզի Հրետանային թանգարանում:


Շլիմանը Միկենում կատարած իր պեղումների ժամանակ թագավորական դամբարանում ոսկե զինակների, հղկած զիորիտե և բրոնզե տապարների հետ միասին գտել է նաև մի լանջապանակի մնացորդ³:

Մեր ալյուս մեջքերումներից հետևում է, որ լանջապանակների օգտագործումը լայնորեն տարածված է եղել շատ երկրներում:


¹ А. В. Арциховский, Материалы и исследования по археологии СССР, № 11, стр. 11.

² И. В. Сикины, Археологические памятники по реке Малый Узень, краткие сообщения, ИИМК, XXXII, 1950, стр. 110—111.

³ П. Фон Винклер, Оружие, Петербург, 1894, стр. 44 и 48:



Նկ. 15. Կաշվե հյուսվածքով և պղնձե վահանիկներով ու կոճակներով
զարդարուն լանջապանակ (Վերահագումովյուն, 6-րդ դամբարան):



Նկ. 16. Լանջապանակի պղնձե վահանիկներ և օբսիդիանե
նետասլաքներ (6-րդ դամբարան):

Ինչ վերաբերում է Գոլովինոյի վեցերորդ դամբարանի լանջապանակին, ապա, պետք է նկատել, որ նրա բեկորները ամուր են և գեղեցիկ, իսկ որ կարեորն է, լանջապանակն ունեցել է որովայնապաշտպան փախտե վահանիկ, որպիսին մեզ ծանոթ լանջապանակներից ոչ մեկը չունի:

Հնդկական և պարսկական լանջապանակների կրծքերը նույնպես, ինչպես Գոլովինոյի լանջապանակինը, զարդարված և պաշտպանված են եղել շրջանաձև մետաղյա տախտակներով:

Հնում լանջապանակի փոխարեն հաճախ օգտագործել են բրդնդե լայն գոտի, դարձյալ որովայնը պաշտպանելու նպատակով, որ միաժամանակ ծառայել է որպես զարդարանք: Այլպիսի գոտիներ Հայաստանում գտնվել են բավականաչափ շատ:

Վերևում մեր շարադրածից հետևում է, որ ինքնապաշտպանության և հարձակման միջոցները հնագույն ժամանակաշրջանում բավական ուժեղ են եղել: Այս իմաստով Գոլովինոն չպետք է մեկուսացվի, որովհետև նրա բնակիչները պետք է կապված լինեին իրենց հարևան ցեղերի հետ, պետք է ազդեին և ազդվեին կուլտուրայի բնագավառում, կենցաղում: Եվ հենց դրանով է բացատրվում Գոլովինոյի վեցերորդ դամբարանի և Իվանովսկու պեղած դամբարանից գտնված իրերի միջև եղած մեծ նմանությունը: Ինչպես վերևում ասացինք՝ երկու գեպքում էլ գործ ունենք զինվորական առաջնորդների դամբարանների հետ:

Գոլովինոն, մեր կարծիքով, շնորհիվ իր աշխարհագրական դիրքի Սեանի ավազանը կապել է մեկ կողմից Կիրովականի ու Ալավերդու, իսկ մյուս կողմից ալժմյան Ադրբեջանի՝ Ղալաքենդի, Գ'տաբեկի և Թերեա նաև ալժմյան Վրաստանի՝ Դմանիսի հետ: Հենց այս իսկ պատճառով Գոլովինոյի կուլտուրան շատ նմանություններ ունի նշված վայրերի կուլտուրաների հետ:

Կ Ա Վ Ա Գ Ո Ր Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գոլովինոյից, Սեանի ավազանից, Կիրովականից, Ալավերդու շրջանից, Արագածի լանջերից, Պաչենից, Գետաբեկից, Ղալաքենդից և Հայաստանի ու ընդհանրապես Անդրկովկասի շատ շրջաններից, (Վրաստան—Թրիալեթից, Սամթավրոյից, Մցխեթից, Մինգչաուրից) գտնված մեծաքանակ կավամանների փաստը ցույց է տալիս, որ միայն երկարատև նստակեցության պայմաններում կարող էր առաջանալ այն:

Դոլովոր, մշտական շարժման մեջ գտնվող բնիկը մեծաքանակ կավե ծանր ամանները փոխադրական անկատար միջոցների պայմաններում չէր կարող տեղափոխել տեղից-տեղ: Բացի փոխադրելու հետ կապված դժվարություններից, նյութապես էլ անհնարին էր տեղափոխումների ժամանակ առաջացած կորուստը լրացնել նոր ձևաքերտումներով: Այս փաստերը խոսում են այն մասին, որ կավամանները արտադրել են տեղում, նստակյաց կյանքով ապրող ցեղերը:

Դոլովինոյի կավամանների մեջ, դրգի վրա գեղեցիկ ու նուրբ արվեստով պատրաստված շատ ամանների հետ, հանդիպում են նաև ձևաքով շինված կոպիտ ամաններ: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ քննություն ենթակա ժամանակաշրջանում բնիկների գլխավոր դրագմունքը դարձել էր անասնապահությունը՝ լեռնային, իսկ երկրագործությունը՝ դաշտային շրջաններում: Այդ ժամանակ սկիզբ առած սոցիալական շերտավորումը գնալով ավելի խորանում էր, արհեստավորներն ինքնուրույնության էին ձգտում:

Բոլոր այս պայմանները հիմք են տալիս կարծելու, որ դեռևս նեոլիթում սկիզբ առած բրուտագործությունը միայն նստակյաց կյանքի պայմանների շնորհիվ լայն զարգացման հասավ:


Նկատի առնելով Դոլովինոյի կավամանների արտաքին ձևերը, պատրաստման եղանակը և նրանց կատարած դերը, բոլոր խնցանությունները բաժանել ենք երեք հիմնական խմբերի.

1. Ձևաքով շինած քրեղաններ, կճուճներ, գավեր, փարչեր և այլ ու այլ տիպի ամաններ: Այս խմբի մեջ կան զարդարուն և անզարդ կավանություններ (նկ. 17):


2. Դրգի վրա շինված լայն բերան քրեղաններ, կովկիթներ, կճուճներ կամ անկանիթ ամաններ, որոնք չունեն պարանոց և բարդ զարդարանք, պատրաստված են բրուտի հալեցողությամբ ու ճաշակով: Այս կավամանները շատ տարածված են Անդրկովկասում և նրա սահմաններից դուրս (նկ. 18):

3. Դրգի վրա պատրաստած կավամաններ, որոնք ունեն բարձր պարանոց և ուռուցիկ իրան, մեծ մասամբ զարդարուն են և կանիթ չունեն: Այս խմբի մեջ մտնում են նաև ալնալիսի կավամաններ, որոնք մասսայական չեն և ծառայել են ինչպես կենցաղային, այնպես էլ կրոնապաշտամունքային նպատակների (նկ. 19—1):

Վերևում նշված առաջին խմբի մեջ մտնող կավամաններից քննության կառնենք ամենաուշագրավներից մի քանիսը.



Նկ. 17. Կավամաններ պատրաստած ձեռքով:




Նկ. 18. Կավամաններ պատրաստած զրզի վրա (Բ խումբ):



Նկ. 19. Գնդաձև սափորներ. առաջինը նվիրված է արևի պաշտամունքին (Գ խումբ):

Ներկրորդ դամբարանի երկրորդ շերտում գտնվեց ձեռքով պատրաստած կոպիտ և անկանթ մի բաժակ, որը թրծված է ոչ թե բրուտի հնոցում, այլ ամենայն հավանականությամբ խարուկի վրա, ուստի շերտության պակասի պատճառով բաժակը չի շիկնել և մնացել է մոխրագույն: Կավը քարոտ է և սվաղխառն,



Նկ. 20. Կավամանների և նրանց վրայի զարդերի տեսակները (6-րդ դամբարան):

պատերը ներսից և դրսից անհարթ: Այդ ամանը պատրաստված է անվարժ ձեռքով:

Լալնբերան կարմրավուն գույնի կճուճ, (գույքամատյան № 1901/137), որ գտնված է առաջին դամբարանում: Այս կճուճն ունի 28,5 սմ բարձրություն, փորի տրամագիծը՝ 31 սմ, բերանի տրամագիծը՝ 24 սմ: Այս ամանը ևս պատրաստված է ձեռքով՝ քա-

բաշատ և ազագախառն վատորակ կալահողից: Կճուճի պատերը ներսից և դրսից հարթ չեն: Փորի ամենալայն մասում իրար դեմ առ դեմ հորիզոնական ուղղությամբ, ունի, այժմ ջարդված, անցքավոր երկու ունկ: Հավանաբար այս կճուճը ևս թրծված է բացօթյա կրակի վրա: Ձեռքով շինված կավամանները մեծ մասամբ թրծված են կամ ցածր ջերմաստիճան ունեցող հնոցում, կամ բացօթյա արված կրակի մեջ:

Երկրորդ խմբին է պատկանում վեցերորդ դամբարանում գտնված սև գույնի զարդարուն մի քրեղան (գուլքամատյան № 1901/111), որի փորի վրաի գոտուց ներքև, վերից-վար, մի քանի տեղով, իջնում են խորաքանդակ գծերից կազմված ժապավենաձև նախշեր: Կավամանների վրա քիչ հանդիպող զարդարանքի այս ձևը շատ հին է: Նախշերի մեջ կա հալկական «Ո» տառի կրկնակին իրար մեջ առած, որը հավանաբար վարպետի նշանը պետք է լինի: Քրեղանը պատրաստված է դրզի վրա, թրծված է հավասար ջերմաստիճանի մեջ: Նույնանման աման գտնվել է Բեշտաշենում, Սաֆրախարաբայի № 73 դամբարանում:

Վեցերորդ դամբարանում գտնված հավասար թրծվածքով սև գույնի կճուճը, որ պատրաստված է դրզի վրա, լավ մաղված կալահողից, բարձրությունը՝ 11,5 սմ, փորի տրամագիծը՝ 17 սմ, անկանթ է, ունի 1,5 սմ լայնություն ունեցող տափակ շուրթեր և շուրթերի հավասարությունը դրված խուլ ունկ: Բերանի տրամագիծը՝ 8 սմ է, շուրթերից ցած շրջանակի անցնում են 13 խորաքանդակ գծեր: Ամանի տակն ուռուցիկ է, այն դրվել է փոս գետնի, կամ փորված առարկայի մեջ (նկ. 17ա):

Վերին աստիճանի հետաքրքիր է Գուլվիհնդում հանդիպող կավամաններից մի քանիսի պատրաստման տեխնիկան. միևնույն ամանը շինված է երկու տարբեր հաստություն ունեցող պատերով: Այսպես, օրինակ, անկանթ կճուճներից մեկն ունի 11,5 սմ բարձրություն, 17 սմ տրամագծով իրան, 8 սմ տրամագծով բերան: Կճուճը գտնված է վեցերորդ դամբարանում: Սրա իրանի ամենալայն մասից ցած՝ պատերը բարակելով հատակի մոտ հասնում են 3 սմ, իսկ կենտրոնից դեպի վեր ամանի բերանի մոտ հաստանալով, հասնում են 1 սմ, ճիշտ այնպես, ինչպես վեցերորդ դամբարանի № 1901/1 կճուճը:

Դժվար է այժմ որոշել թե այս կճուճների պատերին ինչ նկատառումներով է տրվել երկու տարբեր հաստություն:

Նույնանման մի քանի կճուճներ գտնվել են Գետաբեկում և



Նկ. 21. Ձձում (խնոցի) 2-րդ դամբարան:



Նկ. 22. Ձձումի գործածութիւնը Հայաստանում
20-րդ դարի սկզբին:

Ղալաքենդում՝ Ա. Իվանովսկու¹, Սեանի ավազանում՝ Ե. Հալալյանի, Ախտալի, Արթիկի շրջաններում՝ մեր պեղումների ժամանակ՝ վեցերորդ դամբարանը հարուստ է նախշեր ունեցող տարբեր ձևերի կավամաններով (նկ. 20):

Այժմ ավելի հանգամանորեն քննենք երկրորդ խմբին պատկանող կավամաններից առավել աչքի ընկնող մի քանիսը:

1. Երկրորդ դամբարանում գտնված 1901/1 սափորն (նկ. 19--2) ունի ուռուցիկ իրան և զրավիչ զարդարանք, պատրաստված է դրզի վրա, կարմրավուն՝ լավ մազած կավահողից, թրծված է անհավասար ջերմություն ունեցող հնոցում, որի հետևանքով ներքևի մասում՝ տեղ-տեղ առաջացել է շեկ, իսկ վերևում սև գույնի: Սափորն ունի 6 սմ տրամագծով նեղ պարանոց, 31 սմ բարձրություն, 9,5 սմ տրամագծով դեպի դուրս լայնացող բերան, փորի տրամագիծը հասնում է 31 սմ, ունի մի կանթ, որի վրա կա խոր ակոս և հավելված, որոնք սափորին դեղեկություն են տալիս:

Սափորի պարանոցից ցած շուրջանակի անցնում է վեց զուգահեռ գծերի մի խումբ, նույնանման գծերի խումբ անցնում է սափորի իրանի ուռուցիկ մասով և զտակապտում նրան: Իրանով անցնող զոտու վրա որպես զարդարանք, հավասար շարքով դրված է վեց պտուկաձև հավելվածներ: Երկու խումբ գծերի արանքում եղած 8 սմ լայնություն ունեցող ազատ տարածությունը ծածկված է 17 եռանկյուններով, որոնց սուր ծալքերն ուղղված են դեպի սափորի հատակը: Եռանկյունիների լայն կողմի անկյունները շոշափում են իրար:

Ինչպես ալս, այնպես էլ № 19 լուսանկարի առաջին պատկերում ցույց տված սափորի ձևը հանդիպում է նաև Դիլիջանի Խրտալնոցում պեղված առարկաների խմբում, Սեանի ավազանում, Արագածի լանջերում:

2. Երկրորդ դամբարանում գտնվել է երկարավուն իրանով մի ձձում, որի երկարությունը հասնում է 44 սմ, իրանի տրամագիծը՝ 31 սմ, բերանի տրամագիծը՝ 9 սմ, իսկ հատակի տրամագիծը՝ 11 սմ: Պատրաստված է դրզի վրա, լավ մազած կավահողից, որ ունի մանր ավազի խառնուրդ: Դրսի պատերը լավ հարթված չեն, իրանի ուռուցիկ մասով, որպես զարդարանք, անցնում է

¹ А. А. Ивановский, Материалы по археологии Кавказа, VI, табл. X. рис. 1,6. գտնված են 26-րդ և 37-րդ դամբարաններից:

մի բեկրեկյալ դարդագիծ, որից ցածր գտնվում է ձձումի հաստ ու ամուր միակ կանթը, իսկ կանթի մոտ կա 2 սմ դուրս ցցվող հաստ ծորակ, թողնված որպես օգանցք և հարոցքի պատրաստ լինելու աստիճանը ստուգելու համար:

Ձձումը, ինչպես երևում է նրա ներկա վիճակից, տարիներ շարունակ գործածության մեջ է եղել, որի հետևանքով կանթի հակառակ կողմի պատերը մաշվել են վերից վար՝ ամբողջ ձձումի իրանի երկարությամբ 14—16 սմ լայնությամբ: Պատերի ալն մասը, որ գետնին չի քսվել, պահպանել է իր սկզբնական՝ 1 սմ հաստություներ, իսկ ալն մասը, որ հենվել է գետնին և անընդհատ շարժվել՝ վ շփվել է նրա հետ՝ հետզհետե բարակելով մաշվել է և հասել մինչև 2 մմ (նկ. 21):

Այսպիսի ձձումներ մինչև վերջերս գործածության մեջ են եղել Հայաստանի լեռնային շրջանների գյուղերում (նկ. 22):

Նույնանման ձձում գտնված է Կուֆտինի պեղումների ժամանակ Թրիալեթում Յինցկարի № 16 դամբարանում¹: Այդ ձձումը Կուֆտինը վերագրում է վաղ երկաթի շրջանին:

Այս ձձումների և կովկասյան գուլիստի փաստն ինքնին խոսում է մ. թ. ա. 7—6-րդ դարերում կաթի մշակման կուլտուրայի առկայության մասին:

Փաստ է, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, Հայաստանում, անասնապահությունից ստացվող եկամուտը մարդկանց գոյությունն ապահովող գուցե և հիմնական միջոցն էր: Հենց այս վիճակն էլ թելադրում էր բնիկներին զբաղվել կաթի և բրդի մշակմամբ: Բրդից մանում էին թել, գործում հագուստներ: Դիլիշանի կիրճում, Սևանի ափագանում, Արարատյան դաշտավայրում, Շիրակի սարահարթում և Անդրկովկասի շատ վայրերում գտնվել են իլիկի՝ ոսկորից, կավից, քարից պատրաստած գլուխներ (նույնիսկ պղնձի դրի բնակավայրերից) և միաժամանակ բրդե գործվածքի ֆնացորդներ՝ Բասարդեչարում, Ջրառատում և այլ վայրերում:

3. Երկրորդ դամբարանում գտնվել է գեղեցիկ արտաքինով գնդաձև սափոր, որի բարձրությունը 30 սմ է, իրանի տրամագիծը՝ 33 սմ, հատակի տրամագիծը 12,5 սմ (նկ. 19—1): Ալն տնի 3 սմ բարձրությամբ, 6 սմ տրամագծով կենտրոնից ներս ճկված պարանոց և դեպի դուրս լայնացող 10 սմ տրամագծով

¹ Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалетин, Тбилиси, 1941, стр. 57, табл. XXIX.

ձադարաձև բերան: Շուրթերի և պատերի հաստությունը հավասար են: Շուրթերի մի մասը ջարդված է: Թրծված է անհավասար ջերմաստիճանի մեջ, որի հետևանքով նրա վրա տեղ-տեղ առաջացել են սև, մոխրագույն և դեղնավուն գույներ: Սափորը պատրաստված է դրգի վրա ավաղախառն կալից: Ունի մի կանթ, որի վրա երկու տեղով կան եղջերանման հավելվածներ: Այդ եղջյուրների արանքում չորս տեղով դրված են կոճականման փոքրիկ բշտիկներ:

Այս սափորի պարանոցից ցած շուրջանակի անցնում են երկու ուռուցիկ գծեր, նույնատիպ երեք գծեր գոտեպատում են սափորի իրանը, վերջին գծերի արանքով անցնում է թուլլ նշմարվող ալիքավոր մի գիծ: Դոտուց վեր (վերագիր գծերով) չորս տեղով սափորի փորի վրա կազմված են կիսաշրջան աղեղներ: Վերջիններիս ծալքերն իջնում են սափորի իրանը զրկող գոտու վերին գիծը: Այս կիսաշրջան կամարներից լուրաքանչյուրի կենտրոնում կան մեկական պտուկներ, իսկ լուրաքանչյուր կամարի ներսում տարածվում են 21 ճառագայթներ: Հնում բացի մասսայական կարիքների համար արտադրվող կավամաններից, արտադրվում էին նաև եզակի կավանոթներ: Քննության ենթակա այս սափորը վերջինների խմբին է պատկանում, իսկ նրա վրայի պատկերները կրոնապաշտամունքային խմաստավորում ունեն:

Արտադրական միջոցների ծայր աստիճան անդարգացած դրությունը, բնության և բնական ուժերի հանդեպ մարդու ունեցած վախ՝ փոթորիկն ու կալծակը, անձրևն ու կարկուտը ներգործում էին նախաբնիկի մտածողության վրա և նրան մշտապես կախման մեջ պահում բնությունից: Այստեղից էլ մարդկանց մեջ առաջացել է բնական երևույթներն աստվածացնելու գաղափարը:

Լենինն ասում է թե «Վախն առաջացրեց աստվածներ» կամ.

«Շահագործվող անուժ դասակարգերը շահագործողների հետ, նույնպես անխուսափելիորեն արթնացնում են հավատ դեպի հանդերձալ կյանքը, ինչպես անուժ վալրենիների մոտ բնության դեմ մղվող պայքարն առաջացնում է հավատ դեպի աստվածները, աստանաները, հրաշքները և այլն»:

Փրիդրիխ Էնդելսը խոսելով կրոնի առաջացման մասին գրում է.

«... Ամեն մի կրոն ոչ այլ ինչ է, եթե ոչ այն արտաքին ուժերի ֆանտաստիկ արտացոլումը մարդկանց գլուխներում, որոնք

¹ В. И. Ленин, Сочинения, изд. 2, том XIV, стр. 75 и 419.

իշխում ձև մարդկանց վրա նրանց ամենօրյա կյանքում, մի արտա-
ցում, որի մեջ երկրային ուժերը վերերկրային ձև են ընդունում»¹:

Հետազոտում արտադրական ուժերի հետ տեղի ունեցած լուրջ
փոփոխությունները արտադրական միջոցների և արտադրանքի
մասնավոր յուրացումը, անհատական սևիականություն և նման-
օրինակ այլ երևույթների առաջացումը հիմք են դառնում պաշտա-
մունքների նկատմամբ մարդկանց մտածողության փոփոխման
համար:

Պետք է ենթադրել, որ հենց այս շրջանում էլ ձևավորվում
է լուսատուների պաշտամունքը, որն օրգանապես կապված է եր-
կարատե ու համառ այն պալքարի հետ, որի օղնությունը թուլա-
ցավ և աստիճանաբար վերացավ այդ ժամանակաշրջանում արդեն
հնացած տոտեմիզմը:

Լուսատուների, առավել ևս արևի պաշտամունքը կապված է
եղել նյութական կյանքի, լույսի, բերրիության, բեղմնավորության
հետ և հարատևել է Կոստանյակ դարեր: Ավելի ուշ պաշտվող լուսա-
տուները նյութականացվել են և պատկերվել իրերի վրա: Իրը, որի
վրա նկարվել է լուսատուի պատկերը, պաշտվել է լուսատուի
փոխարեն²:

Մեր կարծիքը հաստատվում է նաև այս սափորի վրայի ա-
ռաջին հալացքից պարզ թվացող նշաններով, որոնք կիրճենք
ստորև քննություն առնել ըստ իրենց 'նշանակության' յուրաքան-
չյուր նշանն առանձին և ապա կոմպոզիցիան՝ ամբողջությունը:

Հնադիտություն մեջ վաղուց հայտնի է, որ կավամանների
վրա եղած քանդակների խմբում շատ հաճախ հանդիպում են կրո-
նապաշտամունքային իմաստավորում ունեցող պատկերներ, որոնք
կապվում են զանազան աստվածների և պաշտամունքների հետ:

Անդրկովկասում սակավաթիվ չեն այդ կարգի ամանները:
Դեռևս 1859 թ. Ե. Ա. Ռեսելերը Խանլարի մոտ, Կիլկի դադում իր
կատարած պեղումների ժամանակ դամբարաններից մեկի մեջ գտել
էր մի կավաման՝ կենդանիների և մարդկանց քանդակներով զար-
դարված, որոնք արված են ոչ թե իբրև սոսկ զարդարանք, այլ

¹ Ֆ. Էնգելս, Անտի Դյուրինգ, Երևան, 1952, էջ 407:

² Զ. Մնացականյան, Արևապաշտության հետքերը Հին Հայաստանում
ըստ պեղածո բրոնզե իրերի, Հնչյապատություններ Պետական Պատմական թան-
գարանի հատոր 1, Երևան 1948, էջ 78:

դրանք իմաստավորվում և կապվում են որսի աստվածության և նրա հետ կապված այլ հասկացողությունների հետ¹:


1906 թ. Երվանդ Լալայանը Նոր Բայազետի մոտ Մրթբի ձոր կոչված վայրում կատարած պեղումների ժամանակ գտավ կճուճ (գուլքամատյան № 115/128 Պետական Պատմական թանգարան), որի շուրթերից ցած կա վերադիր մի քանի երևակայական կենդանիների և մարդկանց պատկերներ՝ զոհասեղանի հետ միասին: Այս ամբողջը ներկայացված է որպես մի կոմպոզիցիա և մեր կարծիքով կապված պետք է լինի աստվածներից մեկին զոհ մատուցելու հետ:

1954 թ. Դիլիջանում (Իջևանի շրջան) Վերեդամանների ձոր» կոչվող վայրում հողալին աշխատանք կատարելու ժամանակ, պատահաբար բացված քարարկյա դամբարանում, մի քանի կավամանների հետ միասին գտնվեց նաև կենդանադարձ փոքրիկ կճուճ (գուլքամատյան № 1919/1 Պետական Պատմական թանգարան), որի բարձրությունը հասնում է՝ 10,2 սմ, իրանի տրամագիծը՝ 16 սմ, թրծված է հավասար շերմաստիճան ունեցող հնոցում, կավը լավ մաղած է, ունի բարակ և հավասար պատեր, որոնց հաստությունը չի անցնում 0,4 սմ: Կճուճի իրանը զրկում է խորաքանդակ, ոչ ուղիղ մի ակոս, որից վերև կճուճը դռնապատվում է միմյանց զուգահեռ ընթացող հինգ ալիքավոր գծերով: Ուշագրավ են կավամանի վրալի ութը կենդանիների, երկու անիվանի մի սալի և մարդկալին երկու պատկերները: Նշված բոլոր ֆիգուրները պատկերացված են թույլ գծերի և նրանց արանքները լցված մանր կետերի օգնությամբ: Այդ կետերը փորված են սուր ծայր ունեցող, հավանաբար, ոսկրե գործիքի միջոցով (նկ. 23):

Կճուճի վրա գտնվող սալին լծված են երկու երևակայական կենդանիներ: Սալի ետևի կողմում, որտեղ գտնվում են նրա երկու անիվները, թեք դիրքով կանգնած է մի մարդ, որը թվում է թե կախված է օդում: Վերջինս լայն տարածել է իր թևերը, սրա աջ ձեռքը մյուսից ավելի երկար է, իսկ ձախ ձեռքից կախված է մի իր, որը նման է մտրակի: Երկրորդ մարդը կանգնած է սալի առաջ, և թևերը տարածել է աջ ու ձախ: Թեքադիր մարդուց հետո միմյանց հստից կարծեք առաջ են շարժվում վեց կենդանիներ, որոնցից առաջինը կեն պոչով, երկար ականջ և սրադունջ մի կենդանի է, իսկ մնացածները այծեր են, որոնք բացի ուլից, բոլորն

¹ Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Ленинград, 1949, стр. 90—91.


էլ միմյանց նման են թե՛ մեծութամբ և թե՛ իրենց կեցվածքով։
Բոլոր ավերի եղջուրները կիսակոր են, պոչերը կարճ ու փոքր
ինչ վեր թեքված, իսկ ուլիկը կանգնած է հակառակ գիրքով և իր
դունչը մեկնել է հետևից եկող ավերի կոկորդին։



Նկ. 23. Ժամանակակից ձևում:

Կճուճի վրա եղած բոլոր պատկերներն ամենայն հավանական-
նութամբ կապված են կենդանիների պաշտամունքի, բերրիության
և բեղմնավորության հետ։

Ժակ դը Մորգանը Ախթալայում կատարած պեղումների ժամանակ գտավ պարանոցին բրոնզե մի օղ անցկացրած սափոր (նկ. 24), որն ամենեին չի տարբերվում Գոլովինոյի երկրորդ



Նկ. 24. Սափոր Ախթալայից (ժ. Դ. Մորգանի պեղումներից):

դամբարանի մեր նկարագրած սափորից՝ թե իր մեծությամբ և ձևով և թե իր վրայի նաշխերով¹:

Ախթալայի սափորի վրայի պատկերները, Գոլովինոյի սափորի պատկերների բառացի կրկնությունն են, որոնք մինչև այժմ քննության չեն առնված: Երբեմն պեղածո կավամանների վրա հանդիպում են այնպիսի նշաններ, որոնք անվիճելիորեն կապվում են երկրի, ջրի, լեռների, կենդանիների և լուսատուների պաշտամունքների հետ: Այս առումով ուշագրավ են Գոմելի պեղումների

ժամանակ Խանլարում գտնված կավամաններից մի քանիսի վրայի բեկբեկյալ գծադարձերը և որսի տեսարանները:

Հնագիտության մեջ, շատ հաճախ իրերի վրա արված բեկյալ գծերին վերագրվում է սիմվոլիկ իմաստ: Ալիքավոր գծերը կապվում են օձի պատկերացման հետ, իսկ օձը՝ ընդերքի, ջրի հետ, իսկ բեկբեկվող գծերը մեկնաբանվում են որպես երկրի, գոլություն ունեցող լեռների գաղափարն արտահայտող սիմվոլներ:

Հաճախ կավամանների վրա՝ «Գծավոր բեկբեկյալներով պատկերացվել են լեռներ, կամ «կերամիկայի վրա եղած զիգզագավոր գծերը ներկայացրել են օձի գաղափար»²:

Գոլովինոյի սափորի փորի վրայով անցնող նուրբ արվեստով արված բեկբեկվող գծերը կապված են լեռների պատկերացման հետ, իսկ նույն տեղով տարված ուղիղ ալոսները՝ երկրի հորիզոնական երևակայական գծի հետ:

Այստեղից երևում է, որ բարակ գծերից և նրանց միջով անցնող նույնպես թույլ նշմարվող զիգզագներից կազմված գոտին պետք է դիտվի ոչ թե որպես սոսկ զարդարանք (ի հարկե չան-

¹ J. De Morgan, Mission scientifique au Caucase, p. 148.

² Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Ленинград, 1949, стр. 90.

տեսելով, նաև այդ կողմը), այլ որպես իմաստավորված, սիմվոլիզված քանդակ, որն անխզելիորեն կապված է ամանի վրայի մյուս պատկերների հետ: Ուղիղ և կոտրտված գծերը այստեղ ներկայացված են միասնության մեջ, ուղիղ գծերով պատկերացվել է երկրի հորիզոնականը, զիգագոններով նրա վրա գտնվող լեռները:

Հնում շատ անգամ քանդակողները փորձում էին իրենց քանդակները նմանեցնել իրականին, որով նրանք արտահայտում էին իրենց և իրենց շրջապատի աշխարհաըմբռնողությունը և մտածողությունը: Երբեմն մտածողությունները նյութականացվում էին քանդակների ձևով: Ներկա դեպքում սափորի իրանի վրա մեր նկարագրած գոտուց վերև արված կիսաշրջան գծերը նույնպես մենք կապում ենք սիմվոլիկ հասկացողության՝ այն է երկնականության սիմվոլիկ պատկերացման հետ: Քանի որ հնում մեծ չափերով տարածված էր այն հասկացողությունը թե երկինքն իրենից ներկայացնում է մի կամար, որն իբր թե հենվում է տափարակ երկրին: Հենց այսպես էլ երևում են Գոլովինոյի և Ախթալայի ամանների վրայի կիսաշրջան-աղեղները, որոնք նմանեցված են երկնականամարին, որոնց ծայրերը հանգչում են իրենց տակով անցնող հորիզոնի երևակայական դծին: Կավամանի վրա կիսաշրջան աղեղը ներկայացվել է երկնականամարի փոխարեն, իսկ նրա տակով անցնող հորիզոնական գծերը՝ երկիրն իր կոտրտված լեռներով:

Աշխարհի կառուցվածքը նախաբնիկը պատկերացրել է իր տնտողությունից իբրև հորիզոնական գիծ «պարտովի», որն աշխարհի տակն է, և նրա վրա կիսաշրջան մի կամար՝ «վարունա», որն աշխարհի վերևն է¹:

Ըստ բաբելացիների «երկինքը մի կարծր դմբեթ է, որը հենվում է ամուր հիմքերի վրա»²: Երկնքի ներսը լուսավորված է արեգակով, կամ երկնականամարի տակ շարժվում են արեգակը, լուսինը և աստղերը: Երկնքի և երկրի մասին նույն պատկերացումն ունեն նաև այլ ժողովուրդներ: «Ռիգ-վեդա» կրոնական գրքում պատկերացված է, որ երկիրը կազմում է աշխարհի հիմքը, երկրի վրա կախված է լուսատուներով լցված երկնականամարը՝ վարունան, նա պտտվում է և մեղ է ուղարկում արեգակի ճառագայթները:

Բաբելոնում և Փոքր Ասիայում աստվածուհին ներկայանում էր մի կամարի տակ և առավոտյան արևածագին նա դուռը բա-

¹ Տե՛ս Գ. Ա. Գուրե, Երկիր և երկինք, Երևան, 1948, էջ 3—6:

² Նույն տեղում, էջ 21:

ցում էր արևի առաջ, որպեսզի վերջինս իր ճառագայթների միջոցով լույս և ջերմութիւն տարածի երկրի վրա:

Թվում է, որ Գոլովինովի և Ախթալայի սափորների վրայի կամարը նույն այս կամարն է, որի մեջ են թափանցել արևի ճառագայթները և լույս ու կյանք տվել երկրին:

Նախնադարյան մարդիկ մշտապես սարսափի մեջ էին գտնվում բնական երևույթների հանդեպ, նրանք բնական է, որ պետք է ձգտեին իրենց տեսած և առանձնապես պաշտած երևույթները ներկայացնել որևէ առարկայի նմանութեամբ, շեշտելով նրա բնորոշ կողմերը: Լուսատուների պաշտամունքը նշելու համար շատ անգամ փորագրում կամ ուռուցիկ զարդերի միջոցով ցույց էին տալիս արևի սկավառակը և նրանցից ամեն կողմ տարածվող ճառագայթները: Հենց վերջինս էլ պատկերացվել է քննութեան ենթակա կալամանների վրա՝ կիսաշրջանների կենտրոնում:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի Գոլովինովի բնակչի համար սափորի վրա արված պատկերները խոր իմաստ են ունեցել: Այստեղ ներկայացվել է հռաստվածութեան գաղափարը՝ երկիրը՝ ուղիղ և զիգագո գծերի միջոցով, երկինքը՝ կիսաշրջան աղեղների միջոցով, որ սափորի վրա պատկերացված է չորս տեղով և վերջապես արևի գունդն իր ճառագայթներով, որը նույնպես երևվում է չորս տեղով՝ կիսաշրջանների կենտրոնում: Թերևս այս կապված է արևի, օրվա շարժման, կամ տարվա չորս եղանակների հետ: Այսպես, օրինակ՝ արևածագ, կեսօր, մայրամուտ և դարձյալ արևածագ:

Եռաստվածութեան գաղափարը սկիզբ է առնում շատ ավելի վաղ, այն երևում է նաև ուրարտական պանթեոնում աչքի ընկնող խալդ, Տեյշեբ և Արդին եռաստվածութեան միջոց հիշատակվող անուններից:

ԵՆույակ աստվածութեան ոկզբունքը գալիս է դեռ սումերական-բաբելական շրջանից (էա, էնլիլ և Անու եռաստվածութեամբ). այդպես էր և խեթերի մոտ-Արինա քաղաքի աստվածուհին (=հեպիտ), դատա (Տեշուբ) երկնքի աստվածը և Մեղուլա աստվածը, կամ աստվածուհին: Այսպես է հղել Բաբելոնի բարձրացման շրջանում, որ հետզհետե գերիշխել է Մարդուկ աստվածը, իսկ հետո նաև Զարանիթը և Շամաշը (Արևի աստվածը): Վերջինս գրեթե նույն անունով (Շամա) պարսիկների մեջ է իշխել¹:

¹ Դր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1947, էջ 45:

Արդիին (արևի աստվածը) ուրարտական պանթեոնում համարվում է ամենակարող աստվածներից մեկը: Նրա անունով նդովում էին սեպագիր արձանագրություններ քանդող անձնավորություններին կամ այն իրենց վերագրողներին, հարձակումների ժամանակ օգնություն էին կանչում Արդիին:

Արևի աստվածը, ինչպես տեսանք դերիշխել է նաև Բաբելոնում Շամաշ անունով: Իրոք բաբելական Շամաշը իրանական շաման է, որը նույն արևի աստվածն է, արևի պաշտամունքի հետ կապված, որի վերապրունները մինչև այժմ մնում են քրդերի մեջ¹:

Այս ամենից հետևում է, որ Գոլովինոյի քննության ենթակա և Այսթալյում² Ժ. դը Մորգանի գտած սափորների վրայի պատկերները կապված են սիմվոլիկ հասկացողությունների հետ: Այդ սափորները նվիրված են արևի պաշտամունքին:

Անհրաժեշտ է նկատել, որ հակված չենք կարծելու թե կավամանների և առհասարակ հնագիտական իրերի վրա արված բոլոր քանդակները, կամ ամեն տեսակ պատկերները կապված են որևէ պաշտամունքի հետ: Մենք այն կարծիքին ենք, որ հնագիտական առարկաների վրա հանդիպող պատկերների ճշող մեծամասնությունն արված են որպես լոկ զարդարանքներ:

* * *

Գոլովինոյի դամբարանադաշտում գտնվող ավելի քան 100 դամբարաններն իրենց տիպերով մտնում են քարարկղային սիստեմին պատկանող դամբարանների խմբի մեջ: Հենվելով պատահական բացված դամբարանների և մեր պեղումների վրա, եկել ենք այն համոզման, որ այստեղ գտնվող կուլտուրան սկիզբ է առնում երկրորդ հազարամյակի վերջերին, կամ առաջին հազարամյակի սկզբներին մեր թվագրությունից առաջ և վերջանում է մեր թվագրության առաջին դարով: Այսպիսով, հաստատվում է, որ այս դամբարանադաշտում կենտրոնացված է գրեթե մեկ հազարամյակի դամբարանային կուլտուրա, առանց 5—3-րդ դարերի (մ. թ. ա.):

Պարզել ենք նաև, որ Գոլովինոյի դամբարանադաշտից մոտ 700 մետր դեպի հարավ-արևելք գտնվող բնակատեղիի ավերակները պատկանում են այս դամբարանադաշտն ստեղծող ցեղերին:

¹ Տե՛ս Լ. Մնացականյան, Արևապաշտության հետքերը հին Հայաստանում ըստ բրոնզե պեղածո իրերի, Թանգարանի «Աշխատություններ», 1, 1948, էջ 81:

Գոլովինոյում պատահաբար բացված երեք դամբարաններից երկուսում գտնված նյութը մենք վերագրում ենք մեր թվագրությանը առաջ 2—1 դարերին: Իսկ 1950 և 1953 թվականներին պեղած 10 դամբարանների և պատահաբար բացված առաջին դամբարանի իրերը՝ առաջին հազարամյակի առաջին կեսերին (մ. թ. ա.):

Գոլովինոյի կուլտուրան անկասկած պատկանել է տեղաբնիկ ցեղերին, այն իր վրա կրում է ինքնատիպության կնիք, բայց բնավ Գոլովինոյի կուլտուրան չենք դիտում իր շրջապատից կտրված, մեկուսացած վիճակում: Այն չենք կտրում հարևան ցեղերի միջև եղած կուլտուրական կապերից: Ընդհակառակը, Գոլովինոն, շփման շնորհիվ փոխազդեցությունների մեջ է գտնվել հարևան ցեղերի հետ: Այս առումով այդ կուլտուրան բազմաթիվ կողմերով կապված է Սևանի ավազանի, Կիրովականի, Ղալաքենդի, Գետաբեկի և նույն ժամանակներին պատկանող այլ կուլտուրաների հետ:

Գոլովինոյում հավանաբար ապրել են ազդեցիկ, ռազմունակ և շրջապատի հետ զանազան կապերի ու թերևս նաև ընդհարումների մեջ գտնվող տեղաբնիկ ցեղախմբեր:

Մասնագիտական ուսումնասիրությամբ հաստատված է, որ Հայաստանի շրջաններում (Իջևան, Կոտայք, Մեղրի, Վեդի, Սևանի ավազան, Զանգեզուր և այլն) գոյություն ունի ագաթ և սարգիոն քարերի մի քանի տեսակներ: Իսկ հնագիտական պեղումների ժամանակ Հայաստանում բացված դամբարանների մեծ մասում գտնվել են երբեմն մի քանի հարյուրի հասնող սարգիոնից և ագաթից ուլունքներ, որոնք իրենց գույներով և կազմությամբ ոչնչով չեն տարբերվում տեղական քարերից: (Տես անալիզի տախտակը): Բացի այդ, ամենից հավանականն այն է, որ դամբարաններում մեծ քանակությամբ հանդիպող ուլունքներ արտադրվել են տեղում:

Անալիզով հաստատվեց Գոլովինոյի մոտերքում գտնված անմշակ սարգիոնի քարի և դամբարաններում գտնված ուլունքների կազմության նույնությունը:

Այս ամենից բնավ չի հետևում, թե ընդհանրապես մենք բացասում ենք ներմուծման և փոխանակման փաստերն ու դեպքերը հնագույն ժամանակներում: Ընդունելով փոխանակման հնարավորությունը, միաժամանակ մերժում ենք սարգիոնե ուլունքների հնդկական ժագման մասին եղած տեսակետը:

Փաստերը ցույց են տալիս, որ 7—6-րդ դարերում գոյություն են ունեցել ընչազուրկ մարդիկ, հավանաբար մասամբ ռադ-

Գոլտվենոյի սաւրդիւնն ուլունքնեի և նույն վայրի սաւրդիւն քարի անալիզի արդունքները (անալիզը կատարել է ԳԱ երկրաբանութեան ինստիտուտի գիտ. աշխատող Արաքս Պետրոսյանը)

Նմուշ	Պարի	Սիլիցիւմ (SiO ₂)	Ալյումինիւմ (Al ₂ O ₃)	Տիտան օքսիդ (TiO ₂)	Ֆերոքսիդ (Fe ₂ O ₃)	Մանգան օքսիդ (MnO)	Կալցիւմ օքսիդ (CaO)	Նատրիւմ օքսիդ (Na ₂ O)	Կալիւմ օքսիդ (K ₂ O)	Հիւրստիկ կոմպոնէն (ն.ս.ն.)	Ներքին
ուլունք սաւրդիւնի	Գոլտվենոյի 1-ին դամբարան	97,94	2,27	Հ.	0,13	Հ.	0,12	0,41	Հ.	0,02	99,99
ուլունք սաւրդիւնի	Գոլտվենոյի 3-րդ դամբարան	95,44	2,10	Հ.	0,20	Հ.	0,20	0,22	Հ.	0,39	99,65
բնական սաւրդիւն քար	Գոլտվենոյի գետակի ձորում	95,01	2,18	Հ.	0,18	Հ.	0,21	0,76	Հ.	0,28	98,82

մագերիններ, որոնք իրենց տիրոջ մահվան դեպքում զոհվել և նրա հետ թաղվել են նույն դամբարանի մեջ:

Այստեղից հետևում է, որ մեր թվագրությունից առաջ 7—6-րդ դարերում Հայաստանի տեղաբնակ ցեղերի մոտ գոյություն է ունեցել ռազմագերիներին ստրկացնելու և վերջիններիս իրենց տերերի հետ բռնությունաբար թաղելու սովորությունը:

Գոլովինոյի երկրորդ դամբարանը պատկանում է իրերով հարուստ դամբարանների թվին և կարելի է ենթադրել, որ նա եղել

1950 թ. Գոլովինոյում պեղած մետաղե իրերի անալիզի արդյունքները

Իրի տեսակը	Հայտարարված մետաղը
անամեջ կիսախողովակի բեկորներ	(Cu)
II դամբարան	պղինձ
զարդակոճակ II դամբարան	»
լանջապանակի վահանիկ	»
VI դամբարան	
սուր VI դամբարան	»
լանջապանակի զարդակոճակ	»
VI դամբարան	»
զարդաշթանի օղակ. ինվ. դիրք № 29(1141) 6	
դաշույն	»
II դամբարան	»
դաշույն	Fe
մանգաղ	»

է ցեղի մեջ մեծ դիրք ունեցող սոհմապետերից մեկի կամ գուցե և ցեղապետի հենց իր դամբարանը:

Երկրորդ դամբարանից հանված ձձումները և մյուս դամբարաններից գտնված կովկիթներն ու մանր և խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորների գլուտները հիմք են տալիս պնդելու, որ մ. թ. ա. 7—6-րդ դարերում այստեղ ապրող տեղաբնիկ ցեղերը հավանաբար դադարել էին քոչվորական կյանք վարելուց, նրանց հիմնական զրադմուռքը դարձել էր անասնապահությունը և երկրագործությունը:

Գոլովինոյում գտնված մետաղե իրերի քիմիական անալիզը, որ կատարվել է Երևանի Պետական համալսարանի քիմիական լաբորատորիայում, ցույց տվեց, որ պղնձե առարկաները մաքուր պղնձից են և նրանց մեջ անագի խառնուրդ բոլորովին չկա, ուրեմն այստեղ բրոնզի մասին կամ գաղափար չեն ունեցել և կամ անգամ

չունենալու պատճառով առարկաները պղնձից են շինել. այդպիսին է նաև վեցերորդ դամբարանում գտնված սուրը¹:

Գոլովինոյի երկրորդ դամբարանի ընտրոշ կողմերից մեկն էլ այն է, որ այնտեղից գտնված բազմազան առարկաների՝ զենքերի, մետաղե իրերի (պղինձ և երկաթ), զարդարանքի պարագաների և կավամանների խմբի մեջ հայտնաբերված են նաև պաշտամունքային նշանակություն ունեցող իրեր, ինչպես օրինակ արևի պաշտամունքին նվիրված զեղեցիկ սափորը: Դրանով հաստատվում է, որ Գոլովինոյի ընկիները ճանաչել են արևի տված կենսական օգուտը՝ լույսը, շերտությունը և իրենց պաշտամունքների առարկաների մեջ գլխավոր տեղերից մեկը հատկացրել նրան:

Հայաստանում քիչ է հանդիպում երկշերտ դամբարան: Գոլովինոյի երկրորդ դամբարանը, որն ուներ երկու շերտ, առաջացել է հին դամբարանն օգտագործելու հետևանքով: Հետևապես ստորին շերտի թաղումը հին է, իսկ վերինը՝ համեմատաբար նոր:

Երրորդ, չորրորդ, հինգերորդ դամբարանները որ պեղվել է 1950 թ., թաղման ձևով, իրերով համապատասխանում են՝ Սևանի ավազանի, Կիրովականի, Ալավերդու, Ղալաքենդի, Գետաբեկի մ. թ. ա. 10—8-րդ դարերի, պատկանող դամբարաններին, հետևապես այդ դամբարանները նույնպես պետք է վերագրվեն հիշյալ ժամանակաշրջանին:

Ինչպես տեսանք վերևում, կավամանները շինված են երկու եղանակով, դրգի վրա և ձեռքով: Առաջիններն ունեն նուրբ և հավասար պատեր, արտաքուստ զեղեցիկ են, շատ անգամ զարդարուն, իսկ ձեռքով պատրաստած կավամանները զուրկ են արտաքին հրապուլրից, ծանր են և կոպիտ: Նշանակում է, քննություն հենթակա ժամանակաշրջանում բրուտի դուրգը դեռ չէր գերիշխում:

Վեցերորդ դամբարանից գտնված կավամաններից շատերի զարդաքանդակներն ինքնատիպ են և ունեն արխայիկ ծագում: Այստեղ գտնված ամաններից շատերի մեջ պահպանվել էին մանր եղջերավոր կենդանիների ոսկորների մնացորդներ: Այդ ամանները դրվել են դամբարանի մեջ ննջեցյալի համար պատրաստած ուտելիքներով լցված:

Ննջեցյալների հետ ուտելիք դնելու սովորույթը Հայաստա-

¹ Մետաղի անալիզը կատարել են ընկերներ Ռ. Զաքարյանը և Ժ. Հովհաննիսյանը պրոֆեսոր Տ. Ղազանջյանի ղեկավարությամբ:

նում շատ հին ժամանակներում է հանդես գալիս և հարատևում է մինչև 4—3-րդ դարերը մեր թվագրությունից առաջ: Այդ երևույթը կապված է հանդերձյալ կյանքի մասին ունեցած հասկացողությունների և պատկերացումների հետ: Կավամաններից մի մասն էլ իջեցվել են դամբարան դատարկ վիճակում, որը կապված է մեկ կողմից ննջեցյալի անձնական սեփականությունը կազմող ունեցվածքը նրա հետ թաղելու սովորության, իսկ մյուս կողմից մեռնողի հանդեպ ունեցած վախի զգացման հետ:

Հնագետ-պատմաբաններից ոմանք կարծում են թե կավամանները տեղավորում էին դամբարաններում ննջեցյալների միայն ոտքերի կողմում: Շատ օրինակներով կարելի է ցույց տալ, որ դամբարանների բոլոր կողմերում և նրա կենտրոնում դնում էին կավամաններ:

Վերևում նկարագրված կավամանների մեր խմբավորումներից հետևում է, որ Գոլովինոյի համայնքում գոյություն է ունեցել «մասնագետ» արհեստավոր բրուտը, որ աշխատել է դրգի վրա և պատրաստել բարձրորակ կավանոթներ: Նրա կողքին պետք եղած ժամանակ ամաններ են պատրաստել նաև ոչ մասնագետ մարդիկ:

Վեցերորդ դամբարանում և Անդրկովկասի այլ վայրերում գտնվող լանջապանակների միացորդների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում դեռևս վաղ բրոնզի շրջանում օգտագործման մեջ են եղել լանջապանակները: Ինչպես երևում է, սկզբնական շրջանում, լանջապանակների հիմքը՝ եղել է կաշին, կամ կոպիտ գործվածքը, որոնց վրա ամրացվել են պղնձե զարդակոճակներ և վահանիկներ: Լանջապանակների գոյության փաստը ստիպում է մտածել, որ Հայաստանում և հարևան երկրներում ապրող բնիկները, հաճախ եղել են պատերազմների մեջ և լանջապանակն օգտագործել պաշտպանության կարիքից դրդված:

Լանջապանակը, վահանը և սաղավարտը հարձակումների և պաշտպանության երկարատև փորձի հետևանքով առաջացած գյուտեր են: Իսկ սուրը, որն առաջացել է, ինչպես ցույց ենք տվել, լանջապանակի, վահանի և սաղավարտի գյուտերի ժամանակ, հարձակման և պաշտպանության մեջ կատարել է հսկայական, վճռական դեր, որի հետևանքով էլ վերջին հաշվով այն ֆեոդալացվել է:

Հայաստանում պեղված հնագիտական իրերի խմբում հանդիպում են բազմաթիվ զենքեր, աշխատանքային գործիքներ, զարդարանքի առարկաներ, կավամանների շատ բնորոշ օրինակներ,

որոնց նմանները մինչև վերջին դարերը գործածվել են Հայաստանի և հարևան երկրների ժողովուրդների մեջ:

Առաջին հազարամյակի կեսերը բնորոշ է Հայաստանում հայ ժողովրդի կազմավորմամբ, նրա կուլտուրայի հիմնավորմամբ և վերջապես երվանդյանների ղեկավարած հաստատմամբ:

Այս ամենը հաշվի առնելով հնարավոր է, որ Սևանի ավազանում, Ախտալի շրջանում, Լոռիում, Գոլովինոյում և այլ վայրերում գտնված հնագիտական իրերից շատերն իրենց վրա կրում են այնպիսի բնորոշ դժևոր, որոնք հարազատ են նաև հայկական վաղ շրջանի կուլտուրային:

Այս ամենից միաժամանակ հետևում է, որ հայերը ժառանգել են իրենց նախորդող ցեղերի մշակույթի լավագույն կողմերը:

АРУТЮН МНАЦАКАНЯН

РАСКОПКИ МОГИЛЬНИКОВ В СЕЛЕНИИ ГОЛОВИНО

Р е з ю м е

Обширное могильное поле в Головино возникло в результате длительного оседлого образа жизни. На основании раскопанного материала доказывается датировка могильного поля—с конца II и до конца I тысячелетия до н. э.

Приводятся данные о том, что вокруг могильного поля имелись жилища, одно из которых было раскопано и исследовано автором.

Выяснилась одновременность культур поселения и могильного поля вплоть до VIII в. до н. э. Отсюда вытекает предположение о принадлежности культуры как могильного поля, так и поселения одним и тем же племенам.

В работе показывается, что головинская и хртанецкая (около Головино) культуры различны и, следовательно, утверждение об их аналогичности неосновательно.

В работе исследуются несколько вопросов, связанных с гончарным производством с Головино, классифицируются и датируются глиняные сосуды по формам, технике изготовления и по орнаментам, имеющимся на сосудах. Показывается, что глиняные сосуды имели не только хозяйственное,

но и культовое назначение. На туловах сосудов имеются изображения, носящие культовый характер. В этой связи рассматриваются, в частности, сосуды из второго погребения в Головино и сосуд, найденный в Ахтале Ж. де Морганом, а также найденный случайно в Дилижане сосуд с изображениями повозки, животных и людей.

На основании ряда фактов доказывается, что основным занятием племен, населявших территорию Головино, являлось скотоводство и земледелие. Племена-скотоводы занимались выделкой шерсти, тканей и др. работами.

Несомненно, головинская культура принадлежала местным племенам, она довольно самобытная, однако рассматривается не изолированно от других культур. На основании раскопанного материала можно заключить о связях, которые имелись с соседними племенами. Головинская культура во многом связана с культурами Севанского бассейна, Кироваканом, Кедабеком, Калакентом и др.

Автор доказывает наличие агата и сердолика в различных районах Армении (Иджеван, Котайк, Мегри, Веди, Севанский бассейн, Зангезур и др.). При раскопках могильников в различных районах Армении найдены в большом количестве бусы из сердолика и агата, которые по цвету и составу не отличаются от местных (см. таблицу анализа). Кроме того, вполне вероятно, что обнаруженные в могильниках бусы изготовлены в данных районах, где имеются месторождения горных пород (сердолика и агата). Анализ показывает сходство бус из Головинских могил с необработанным сердоликом, найденным в окрестностях Головино.

Сказанное, однако, не отрицает существовавший обмен между различными племенами. Вместе с тем автор не отрицает точку зрения Лемлейна об индийском происхождении сердоликовых бус, обнаруженных в Армении.

Факты показывают, что в VII—VI вв. до н. э. взятые в результате войн пленные в случае смерти хозяина клались с ним в могилу. Вполне вероятно и насильственное закапывание военнопленных в могилу своих хозяев.

Второй курган в Головино отличается богатым инвентарем. Есть основание полагать, что он принадлежал предво-

дителю племенного объединения или же человеку, занимавшему высокое положение в обществе того времени.

Анализ металлических изделий, найденных в Головино, показывает, что они изготовлены из чистой меди, без всяких примесей, в частности олова. Отсюда следует предположение, что в данной местности редко встречается или же вовсе отсутствует олово. Именно поэтому все изделия изготовлены из меди.

3, 4, 5-ая могилы, раскопанные в 1950 году, по своему ритуалу и по инвентарю соответствуют аналогичным раскопкам из Севанского бассейна, Кировакана, Аллаверди, Кедабека, датированным X—VIII вв. до н. э. Следовательно, рассматриваемые могильники могут быть датированы также X—VIII вв. до н. э.

Как сказано выше, сосуды изготовлены двумя способами: на гончарном круге и от руки (лепные). Первые имеют ровные и тонкие стенки, более красивы и в большинстве случаев имеют орнаменты; вторые — более грубые и тяжелые, лишенные внешнего отличия.

В работе показывается, что с глубокой древности существовал обычай класть в могилу с покойником пищу в сосудах. Этот обычай, связанный с взглядами и пониманием бытовых вопросов в обществе того времени, продолжается вплоть до IV—III вв. до н. э.

В некоторых случаях в могилу клались и пустые сосуды, что объясняется не только обычаем закапывать в землю все личное имущество покойника, но и страхом перед ним.

По мнению некоторых археологов, сосуды клались в могилу лишь у ног покойника. Можно, однако, привести множество убедительных примеров, свидетельствующих о том, что сосуды клались не только у ног покойника, но и почти во всех частях могилы.

Остатки панциря из шестого могильника показывают, что они употреблялись еще в эпоху ранней бронзы. Автор предполагает, что первоначально основанием панцирей служила кожа, или же грубая ткань, на которые надевались медные пластинки. Найденные остатки панциря свидетельствуют о происходивших в то время военных событиях.

Панцирь, щит и шлем употреблялись как во время нападения, так и при обороне. Не менее важную роль при наступлении играл также меч, почему он и стал предметом фетишизации.

В могильных инвентарях Армении встречаются в большом количестве разнообразное оружие, орудия труда, предметы украшений, гончарные изделия, многие образцы которых бытуют по сегодняшний день как в Армении, так и в соседних районах.

Вторая половина I тысячелетия до н. э. характеризуется интенсивным движением армян внутри страны, распространением армянской культуры и, наконец, упрочением династии Ервандянов.

На основании вышеизложенного автор заключает, что некоторые изделия, обнаруженные в Севанском бассейне, Ахтинском районе, в Лори, Головино и в других районах, имеют характерные черты, типичные для ранней армянской культуры. Армяне унаследовали от древнейших племен, живших на территории Армении, лучшие стороны их высокой культуры. Этот период является временем образования и формирования армянского народа.